

## ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅԵՐ

### Վահրամ Հովյան

Առաջին հայկական բողոքական համայնքը պաշտոնապես ձևավորվել է 1846թ. Կ.Պոլսում՝ սուլթան Աբդուլ Մեջիդի հրամանով: Այն անվանվել է «Բողոքական ազգ (միլլեթ)»: Սկզբնական շրջանում փոքրաթիվ հայ բողոքականների համայնքն աստիճանաբար ստվարացել է՝ Կ.Պոլսից տարածվելով եւ ընդգրկելով Օսմանյան կայսրության մյուս շրջանները, այդ թվում նաեւ Արեւմտյան Հայաստանը: Առաջին աշխարհամարտի նախօրեին բողոքական հայերի թիվն Օսմանյան կայսրությունում կազմում էր ավելի քան 60 հազ. մարդ:

Հայոց ցեղասպանության արդյունքում, բովանդակ Հայության հետ մեկտեղ, իրենց բնակավայրերից գաղթում եւ աշխարհի տարբեր անկյուններում են հաստատվում նաեւ հայ բողոքականները: Դրա հետեւանքով Սփյուռքի գրեթե բոլոր հայ համայնքներում որպես առանձին ենթաշերտ ձևավորվում են հայ բողոքական համայնքները: ԽՍՀՄ փլուզումից հետո Սփյուռքի շատ հայ գործիչների ու կառույցների հետ մեկտեղ Հայաստան են գալիս եւ ակտիվ գործունեություն ծավալում նաեւ բողոքական հայ գործիչներ եւ կազմակերպություններ: Մասնավորապես, Հայ ավետարանական եկեղեցին Հայաստանում վերագրանցվում է 1994թ.՝ ստանալով «Հայաստանյայց ավետարանական եկեղեցի» անվանումը:

Բողոքական հայերը, չնայած իրենց դավանաբանական յուրահատկության գիտակցությանը, այնուամենայնիվ, ունեն բարձր ազգային գիտակցություն եւ իրենց համարում են Հայության մի մասը: Նրանք չեն ընդունում բովանդակ Հայությունից կտրված կամ օտարացած լինելու մասին տեսակետները: Բողոքական հայերի ընկալումներում իրենց՝ Հայության անբակտելի մաս լինելու թեզը խարսխված է հիմնականում երկու սկզբունքային խնդրի շուրջ ծավալվող քննարկումների եւ փաստարկումների վրա.

*1. Հայոց մեջ բողոքականության ծագումնաբանությունը:* Այս հարցում փորձ է արվում ցույց տալ, որ բողոքականությունը հայոց մեջ ամենեւին էլ օտարածին երեւոյթ չէ: Այն ծագել է հենց հայոց մեջ:

*2. Հայ ժողովրդի պատմական ուղու ընթացքում բողոքականների ունեցած դերն ու նշանակությունը:* Այս հարցում փորձ է արվում ապացուցել բողոքականների մեծ ներդրումը պատմության ընթացքում

Հայության առջեւ ծառայած հիմնախնդիրների լուծման գործում: Կարելու տեղ է հատկացվում նաեւ նշանավոր բողոքական հայերի՝ որպես հայ ժողովրդի արժանավոր զավակների, ներկայացմանը:

### **Ծագումնաբանական հիմնախնդիրներ**

Ծագումնաբանական հիմնախնդիրներում հայ բողոքականներն ունեն իրենց սեփական ինքնաընկալումները, որոնք մեծ հաշվով հակադրվում են տարածված այն տեսակետներին, համաձայն որոնց՝ բողոքականության ծագումը հայոց մեջ տեղի է ունեցել օտարերկրյա (ամերիկյան) միսիոներների ծավալած գործունեության արդյունքում: Հայ բողոքականների ինքնաընկալումներում գերիշխում է այն տեսակետը, որ բողոքականությունը հայոց մեջ ունի ներքին՝ հայկական ծագում: Օտարերկրյա միսիոներական գործունեությունը նպաստել է բողոքականության տարածմանը, բայց չի հանդիսացել դրա առաջացման պատճառ: Ամերիկյան միսիոներները պարզապես հայոց մեջ գտել են պարարտ հող՝ իրենց գործունեությունը ծավալելու համար:

Այն, որ բողոքականությունը հայոց մեջ ունի հայկական ծագում կամ արմատներ, բողոքականների կողմից հիմնավորվում է հիմնականում երկու հարթության մեջ՝ աղանդավորական եւ ռեֆորմիստական.

1. *Աղանդավորական ուղղությունը* համարում է, որ հայոց մեջ բողոքականությունը միջնադարյան աղանդավորական շարժումների՝ պավլիկյանների եւ թոնդրակյանների ժառանգորդն է: Այս ուղղությունը փորձ է անում ցույց տալ դավանաբանական ընդհանրությունները միջնադարյան Հայաստանի աղանդավորական շարժումների եւ բողոքականության միջեւ:

2. *Ռեֆորմիստական ուղղությունը* պնդում է, որ բողոքականությունը հայոց մեջ առաջացել է 17-րդ դարից՝ Հայ Առաքելական եկեղեցու ներսում ծավալված ռեֆորմիստական (ավետարանական) շարժման արդյունքում: Ռեֆորմիստական շարժման նախաձեռնողներն ու իրականացնողները եղել են Հայ Առաքելական եկեղեցու հոգեւորականները: Սկզբնական փուլում վերջինիս շրջանակներում նրա ռեֆորմիստական թելը խաղաղ եւ համերաշխ գոյակցել է ավանդական թելի հետ: Հետագայում, սակայն, նրանք հեռացվել են Հայ Առաքելական եկեղեցուց, ինչը հանգեցրել է նոր եկեղեցի հիմնելու անհրաժեշտությանը. 1846թ. օսմանյան սուլթանի հրամանով հայ բողոքականներն առանձին համայնք ճանաչվեցին:

Թեեւ բողոքականության հայկական ծագումը մատնանշող այս երկու հարթությունները միմյանցից անկախ են, սակայն այդ անկախությունը

կրում է հարաբերական բնույթ: Բանն այն է, որ 17-րդ դարից սկիզբ առած ռեֆորմիստական շարժումը երբեմն դիտվում է որպես միջնադարյան հայ աղանդավորության՝ Պավլիկյան եւ Թոնդրակյան շարժումների վերագարթոնք: Ընդունվում է այն տեսակետը, համաձայն որի՝ Պավլիկյան եւ Թոնդրակյան շարժումները, թեև պարտություն կրեցին միջնադարում, սակայն ամբողջությամբ արձատախիլ չեղան եւ զարթոնք ապրեցին 17-րդ դարում՝ ի դեմս Հայ Առաքելական եկեղեցու ներսում ռեֆորմիստական շարժման:

Բացի վերոնշյալ երկու ուղղություններից, առկա է նաեւ ոչ այնքան տարածված մեկ այլ ուղղություն, որը նպատակաուղղված է ոչ այնքան բողոքականության հայկական ծագումն ապացուցելուն, որքան առաջ մղելուն այն թեզը, թե բողոքականության արտաքին ծագումը չի զրկում հայ բողոքականներին իրենց ազգային ինքնությունից՝ հայ լինելուց: Համաձայն այս մոտեցման, եթե անգամ բողոքականությունը հայոց մեջ ունի արտաքին ծագում, այսինքն՝ առաջացել է օտարերկրյա միսիոներների ծավալած գործունեության արդյունքում, ապա դրանում որեւէ սարսափելի բան չկա: Մարդկության պատմությունը տարբեր քաղաքակրթությունների եւ մշակույթների փոխազդեցության պատմությունն է: Տարբեր քաղաքակրթություններ եւ մշակույթներ, փոխազդեցությունների մեջ մտնելով, միմյանցից վերցնում եւ միաժամանակ միմյանց փոխանցում են իրենց արժեքները: Հետեւաբար, եթե բողոքականությունը հայ իրականության մեջ է ներթափանցել արտաքին աշխարհից, դրանում ողբերգություն չկա: Հայությունն իր պատմության ընթացքում այլ քաղաքակրթություններից եւ մշակույթներից վերցրել է բազմաթիվ արժեքներ՝ միաժամանակ իր արժեքները փոխանցելով նրանց: Հետեւաբար, Հայության այն հատվածը, որն արտաքին աշխարհից վերցրել է բողոքականությունը որպես դավանանք կամ կրոնական արժեք, զուտ դրա համար արժանի չէ պարսավանքի, հատկապես այն դեպքում, երբ այդ կրոնական արժեքի փոխառությունը չի հանգեցնում ազգային ինքնության կորստին կամ ազգային ինքնագիտակցության անկմանը: Բողոքական հայերը նույնչափ հայ են, որքան մյուս հայերը:

### **Հայության ճակատագրում ունեցած դերի մասին**

Բողոքական հայերի պատկերացումները Հայության ճակատագրում իրենց ունեցած դերի մասին ընդհանուր առմամբ հանգում են նրան, որ հայ բողոքականները մյուս հայերի նման հավասարապես ենթարկվել են ճնշումների ու զրկանքների, կրել են Հայությանը ճակատագրով բաժին հասած բոլոր տառապանքները: Միեւնույն ժամանակ, բողոքական հա-

յերը, ըստ իրենց ինքնաընկալման, մեծ ներդրում ունեն Չայության առջև ծառայած հիմնախնդիրների (հայապահպանություն, կրթամշակութային զարգացում, սոցիալական խնդիրներ եւ այլն) լուծման գործում: Իսկ բողոքական հայերի՝ համազգային նշանակություն ունեցող գործողություններում որպես դրդապատճառ հանդիսացել է ոչ թե նրանց բողոքական, այլ հայ լինելու հանգամանքը:

Բողոքական հայերի ինքնաընկալումները Չայության ճակատագրում իրենց դերի մասին կարելի է բաժանել մի քանի ոլորտների.

- կրթամշակութային
- հայապահպանության
- սոցիալական:

1. *Կրթամշակութային* ոլորտում հատկապես կարելորվում է այն հանգամանքը, որ բողոքական հայերի կողմից է առաջին անգամ աշխարհաբար հայերենով թարգմանվել Աստվածաշունչը, որի արդյունքում գրաբարին այլևս չտիրապետող Չայությունը կրկին կարողացավ հասու դառնալ քրիստոնեական արժեքներին: Բողոքական հայերը բացել են բազմաթիվ դպրոցներ եւ ուսումնական հաստատություններ, որտեղ հայ երեխաները ստացել են որակյալ կրթություն:

Բողոքական հայերի ինքնաընկալումներում հայոց կրթամշակութային կյանքի զարգացման գործում բողոքականության կարեւոր դերը մեկնաբանվում է նաեւ այն տեսանկյունից, որ բողոքականության առաջացումը մրցակցություն առաջ բերեց Չայ Առաքելական եկեղեցու եւ Չայ ավետարանական եկեղեցու միջեւ, ինչն էլ լծացումից դուրս բերեց հայոց հոգեւոր-մշակութային կյանքը՝ լուրջ խթան հանդիսանալով վերջինիս զարգացման համար: Օրինակ, բողոքական հայերի կողմից աշխարհաբարով Աստվածաշնչի թարգմանությանը հետեւեց նաեւ Չայ Առաքելական եկեղեցու կողմից նույնատիպ թարգմանությունը: Այսպիսով բողոքականության առաջացմամբ Չայ Առաքելական եւ ավետարանական եկեղեցիների միջեւ առաջացած մրցակցությունը լուրջ խթան հանդիսացավ հայոց մեջ կրթամշակութային կյանքի վերելքի համար: Բողոքականների ընկալմամբ, առանց այդ մրցակցության՝ լծացման եզրին հասած հայոց հոգեւոր կյանքը դատապարտված էր կորստի:

2. *Չայապահպանության* ոլորտում բողոքական հայերի ունեցած դերը սեփական ինքնաընկալումներում կարելորվում է հատկապես ուծացման տարբեր մակարդակներում գտնվող Չայության հայադարձության տեսանկյունից: Խնդիրն այն է, որ Օսմանյան կայսրությունում բողոքական միսիոներները (այդ թվում նաեւ՝ հայ) գործունեություն են

ծավալել նաեւ այլալեզու եւ այլադավան հայերի շրջանում եւ նրանց վերադարձրել իրենց ազգային արմատներին: Մասնավորապէս, բողոքական հայերի կողմից վկայակոչվում է Րաֆֆին, ով ասում էր. «Այժմ Դերսիմի մեջ բողոքականները մտնելով, սկսած են քրդացած հայերին Մեսրոպի տառերով Ավետարան կարդացնել. սկսել են մոռացված մայրենի լեզուն սովորացնել նրանց: Ի՞նչ ասենք այդ քարոզիչներին. ասե՞նք, թե դուք զնացեք հեթանոսներին քարոզեցեք. դուք հայերի հետ գործ չունեք»:

3. *Սոցիալական* ոլորտում հայ բողոքականների դերը սեփական ինքնաընկալումներում կարելի է այն բազմաթիվ սոցիալական եւ բարեգործական ծրագրերով (եւ դրանց նշանակությամբ), որ իրականացվել են բողոքական կազմակերպությունների կողմից թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքում՝ ինչպէս անցյալում, այնպէս էլ ներկայում:

Այս ամենի համատեքստում կարելի է նաեւ բողոքական հայերի կողմից իրականացված գործողությունների դրդապատճառը: Բողոքական հայերի ինքնաընկալմամբ՝ այդ գործողությունների հիմքում ընկած է ազգային, այլ ոչ թե կրոնական ինքնագիտակցությունը: Դրա ամենավառ օրինակը 1921թ. Ս.Թեհլերյանի կողմից Թալեաթ փաշայի սպանությունն է: Ինչպէս շեշտում է Պարզեւ Դարաքոյանը, Ս.Թեհլերյանն իրականացրել է Թալեաթ փաշայի սպանությունը ոչ թե նրա համար, որ բողոքական էր, այլ՝ որ հայ էր:

Այսպիսով, հայ բողոքականները, թեեւ իրենց դավանանքային որոշակի առանձնահատկությամբ, ունեն Հայությանը պատկանելու հստակ զգացում եւ իրենց բարձր ազգային ինքնագիտակցության շնորհիվ կազմում են Հայության անքակտելի մասը: Ինչպէս նշում է Րաֆֆին. «... դավանությունների բազմատեսակությունը չի ոչնչացնում ազգային միությունը միությունը պետք է որոնել այդ մասերի ներդաշնակության մեջ, որի հիմնական մոթիվը պետք է լինի ազգայնությունն իր բարձր նշանակությամբ»:

## **ՊՈԼՍԱՅԱՅ ԶԱՄԱՅՆՔԻ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ** **Ռուբեն Մելքոնյան**

Բուն Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայ համայնքների շարքում իր կարելուր դերն է ունեցել պոլսահայ համայնքը, որն այսօր կանգնած է լրջագույն խնդիրների առաջ: Հարկ է նշել, որ Օսմանյան կայսրության տարբեր վայրերում գոյություն ունեցած հայկական համայնքներից Ցեղասպանությունից հետո գոյատևեց միայն պոլսահայ համայնքը, որն էլ տարբեր տարիներին համալրվեց գավառներից եկած հայերի հաշվին: Իսկ Թուրքիայի գավառներում հայկական համայնքային կյանք այդպես էլ չվերածեավորվեց (թերևս, որոշ բացառություն է միակ հայկական Վաքըֆլը գյուղը):

Ստամբուլի եւ ընդհանրապես Թուրքիայի հայերի շրջանում արտագաղթերը կրել են շարունակական բնույթ, ու նաեւ դրանց հետեւանքով է, որ ներկայումս Թուրքիայում պաշտոնապես կան 55-60 հազար հայեր, որոնք կանգնած են մի շարք խնդիրների առաջ, որոնցից մի քանիսը հատկապես վտանգավոր են, քանի որ անմիջականորեն սպառնում են համայնքի շարունակականությանն ու ապագային:

**Լեզվական խնդիրը.** Ստամբուլի հայ համայնքի ներկայիս կարելուր խնդիրներից է հայոց լեզվի վիճակը. հայախոսությունը շարունակաբար անկում է ապրում: Այս երեւոյթը կապված է տարբեր հանգամանքների հետ, սակայն կարելուր տեղ պետք է հատկացնել նաեւ պետության վարած քաղաքականությանը, որը, մեղմ ասած, բարյացակամ չէ ոչ թուրքախոսության հանդեպ: Որպես պետական քաղաքականության դրսեւորում, կարելի է հիշել հանրապետական Թուրքիայում տարբեր տարիներին բուռն ծավալում գտած «Հայրենակից, թուրքերեն խոսիր» ակցիաները, որոնց նպատակն էր հատկապես հասարակական վայրերում բացի թուրքերենից այլ լեզվի կիրառումն արգելելը: Այս ամենն ուղեկցվում էր տարատեսակ հալածանքների դրսեւորումներով: Հասարակական վայրերում հայախոսության անկմանը հետեւեց նաեւ տանը թուրքերենի գործածումը: Հայերենի մակարդակի անկման մասին ներհամայնքային մի քննարկման ժամանակ նույնիսկ կարծիք է հնչել, որ հայերենը վերածվել է «միջանկյալ լեզվի» եւ ունի «մայրենի լեզվից թույլ, օտար լեզվից ուժեղ կարգավիճակ»: Նույնիսկ կարծիք կա, որ հայերենն այսօր «ոչ թե հայկական համայնքի, այլ ուսուցիչների լեզուն է»: Հայախոսության

նվազման ամենացայտուն օրինակներից է Պոլսո հայկական եկեղեցիներում սովորական դարձած թուրքերեն քարոզը:

Վերջերս Ստամբուլի հայ համայնքում կատարվել է հետազոտություն՝ ըստ տարիքային խմբերի՝ համապատասխան լեզվի առավել շատ գործածության վերաբերյալ: Պատկերը հետևյալն է.

Տարիքային խումբ	13-18	19-24	25-34	35-44	45-60	60+	Ընդհանուր
Հայերեն (%)	26.7	8.8	17.5	22.4	22.2	33.3	18.4
Թուրքերեն (%)	73.3	90.0	77.5	76.6	76.6	66.7	80.1

Ներկայացված աղյուսակից պարզ է դառնում, որ հայերենին տիրապետում է համայնքի ընդամենը 18 տոկոսը, իսկ երիտասարդների շրջանում թուրքախոսության մակարդակը հասնում է 90 տոկոսի:

**Խառնամուսնությունների խնդիրը.** Ընդհանրապես, հայության շրջանում ներքին ամուսնությունները (ենդոգամիան) լայն տարածում ունեն, եւ փորձ է արվում դա պահպանել նաեւ Հայաստանից դուրս: Պոլսահայ համայնքում եւս ներքին ամուսնություններին մեծ ուշադրություն է հատկացվել, սակայն տեղի ունեցող մի շարք գործընթացներ իրենց ազդեցությունն են թողնում նաեւ այս երեւոյթի վրա. համայնքում խառնամուսնությունները հետզհետեւ շատանում են, նույնիսկ հնչում են տեսակետներ, թե դրանք հասել են 40-50 տոկոսի: Այս ամենը մտահոգիչ է, եւ հարցին պետք է մոտենալ նաեւ այն տեսանկյունից, որ խառնամուսնություններն իրենց հետ բերում են մի շարք խնդիրներ. մասնավորապես՝ այդ ամուսնություններից ծնված երեխաների կրոնական պատկանելւթյան եւ ազգային ինքնագիտակցության հարցերը:

**Պատրիարքության խնդիրը.** Հայ համայնքի կյանքում կարեւոր դեր ունի Պոլսո Հայոց պատրիարքարանը. փաստացի հենց պատրիարքն է ընդունվում թուրքական իշխանությունների կողմից որպես հայ համայնքի ղեկավար: Գաղտնիք չէ, որ Պոլսո ներկայիս պատրիարք Մեսրոպ Սութաֆյանն անբուժելի հիվանդ է եւ անկարող՝ կառավարել համայնքը: Ըստ եկեղեցական կանոնադրության, նման դեպքերում նախատեսվում են աթոռակից պատրիարքի ընտրություններ, իսկ ըստ Թուրքիայի օրենքների, պատրիարք ընտրելու թույլտվություն տալիս է Ստամբուլի նահանգապետարանը, որին էլ Պոլսո Հայոց պատրիարքության կողմից ուղղվել է համապատասխան դիմում, սակայն դեռեւս արձագանք չկա: Արդեն հայտնի են աթոռակից պատրիարքի թեկնածուները՝ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ Եպիսկոպոս Չուլջյանը, Գերմանիայի թեմի առաջնորդ

Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը եւ Պոլսո աթոռը ներկայացնող Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը: Նկատենք, որ այսօր Պոլսո պատրիարքարանը որոշակի պատասխանատվություն է կրում նաեւ Թուրքիայում գտնվող հազարավոր հայաստանցիների համար, որոնք այդ երկիր են գնացել աշխատելու նպատակով եւ ունեն բազմաթիվ իրավական խնդիրներ: Իսկ թուրքական իշխանություններն ամեն պատեհ եւ անպատեհ առիթով շահարկում են Թուրքիայում անօրինական գտնվող հայաստանցիների խնդիրը եւ շարունակ ուռճացնում նրանց թվաքանակը: Իր վերջին ելույթներից մեկում վարչապետ Էրդողանը նույնիսկ նշեց 100 հազար թիվը, որը չի կարող աղերսներ ունենալ իրականության հետ:

Գոյություն ունեցող տարատեսակ խնդիրները եւ պատրիարքի փաստացի չգոյությունը պոլսահայերի համար ստեղծել են բարդ իրավիճակ, ինչն ավելի է խորացնում համայնքի ճահճացած վիճակը: Ուստի, կարելի է կարծել, որ գործունե եւ ազգային պատրիարքի ընտրությունը կարող է լուրջ դեր խաղալ Պոլսո հայ համայնքի անկումը կանխելու հարցում:

Սակայն, վերը նշվածներին զուգահեռ, ցավոք, համայնքում նկատվում է պասիվություն ազգային եւ կրոնական խնդիրների նկատմամբ: Նման ընթացքի պարագայում խնդիրներն էլ ավելի են սրվելու, եւ համայնքը կանգնելու է վերջնական ուժացման, ազգային դիմագծի լրիվ կորստի եզրին:

Ներկայումս պոլսահայ համայնքում տեղի ունեցող գործընթացներն ուսումնասիրելիս՝ գալիս ենք այն եզրակացության, որ ըստ համայնքային կյանքի եւ խնդիրների նկատմամբ ունեցած դիրքորոշումների՝ համայնքը կարելի է բաժանել մի քանի պայմանական խմբերի.

1. *Անտարբեր խումբ* – այս խումբը գրեթե չի հետաքրքրվում համայնքային, ազգային խնդիրներով, ավելի շատ լծված է կենցաղային հարցերին, եւ նրա անդամակցությունը հայ համայնքին ավելի շատ կրում է խորհրդանշական բնույթ:

2. *Չանակերպվող խումբ* – այս խումբը, որը մեծամասնություն է կազմում, տասնամյակներ տեւած թուրքական հալածանքի քաղաքականության հետեւանքով դարձել է շատ հարմարվող, երբեմն՝ վախեցած: Նրանց համար հաճախ ցանկալի չեն նույնացումները սփյուռքահայերի կամ հայաստանցի հայերի հետ:

3. *Ակտիվ խումբ* – այս խումբը, որն ամենասակավաթիվն է, հիմնականում կազմված է ազատական գաղափարներով համակված երիտասարդներից, որոնք ցանկանում են փոփոխություններ:



Չարկ է նկատել, որ Չայաստանի դիրքորոշումն ու վերաբերմունքը Թուրքիայի հայության նկատմամբ պետք է տարբերակված լինի, քանի որ այդ երկրում բնակվող հայերի գերակշիռ մասը իրեն չի համարում սփյուռքահայ եւ դրա համար ունի նաեւ հիմնավորված պատճառաբանություններ (օրինակ՝ այն, որ բուն Չայաստանի բազմաթիվ բնակավայրեր, որտեղից սերում են իրենք, այսօր գտնվում են Թուրքիայի կազմում):

Միեւնույն ժամանակ, նկատենք, որ Չայաստանի հետաքրքրվածությունը Թուրքիայի հայերի համայնքային, հոգեւոր, մշակութային կյանքով նույնքան բնական է, որքան ցանկացած ազգային պետության հետաքրքրվածությունն իր երկրի սահմաններից դուրս բնակվող ազգակիցներով (օրինակ՝ Թուրքիայի հետաքրքրվածությունը եվրոպաբնակ թուրքերով): Կարծում ենք նաեւ, որ Չայաստանի եւ Թուրքիայի միջեւ բնականոն հարաբերությունների հաստատումը կնպաստի նաեւ հայ համայնքի առջեւ կանգնած որոշ խնդիրների լուծմանը:

**ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ  
ՆԵՐԿԱ ՓՈՒԼԸ  
Հայկ Գաբրիելյան**

2009 թվականի հունիսի 26-ին Թուրքիայի խորհրդարանն ընդունեց թիվ 5918 օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրինագիծը: Դրանից երեք օր անց նախագիծը, հաստատման համար, ուղարկվեց երկրի նախագահ Գյուլին, որն էլ հուլիսի 8-ին հաստատեց այն՝ չնայած այդպես չվարվելու զինվորականների կոչերին: Այս փոփոխության արդյունքում սահմանադրական կարգը խախտած զինվորականների գործերը հանձնվեցին համաքաղաքացիական դատարաններին: Իսկ դա նշանակում էր, որ Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ քաղաքացիական քննիչները հետաքննության շրջանակներում պետք է ստուգումների ենթարկեին թուրք զինվորականների գաղտնի փաստաթղթերը:

Բացի այդ, թիվ 5918 օրենքը նախատեսում էր փոփոխություններ կատարել Թուրքիայի Հանրապետության Քրեական օրենսգրքի 250-րդ հոդվածում. համաքաղաքացիական դատարաններում զինվորականների նկատմամբ դատական գործընթացներ իրականացնել այնպիսի դեպքերում, երբ նրանք կատարած լինեն հանցագործություններ, որոնք կապված չեն իրենց պաշտոնական լիազորությունների հետ եւ դուրս են գալիս զինվորական ծառայության շրջանակներից:

1952թ. ընդունված թիվ 5918 օրենքում փոփոխություններ կատարելու կապակցությամբ ընդդիմադիր կուսակցություններն արտահայտեցին իրենց բուռն դժգոհությունը: Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը (ԺՀԿ) հայտարարեց, որ մտադիր է դիմել Սահմանադրական դատարան (ՍԴ), քանզի գործող Սահմանադրությամբ հստակ ուրվագծված են ռազմական դատարանների լիազորությունները, մինչդեռ օրենսդիրը, փոփոխության չենթարկելով համապատասխան սահմանադրական դրույթները, փորձել է ամրապնդել վերոնշյալ նորմերը «սովորական» օրենքի ընդունման ճանապարհով:

2010 թվականի հունվարի 21-ին սկսվեց ՍԴ նիստը, ուր քննվեց թիվ 5918 օրենքի փոփոխությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը: ՍԴ հիմնական անդամները (ՍԴ-ն կազմված է 11 հիմնական ու 4 պահեստային անդամներից) միաձայն հանգեցին այն

եզրակացության, որ դրա որոշ դրույթներ չեն համապատասխանում Սահմանադրությանը: ՍԴ-ն գտավ, որ անթույլատրելի է օրենքներով սահմանադրական դրույթների սահմանափակումը:

Պետք է նշել, որ ՍԴ-ն մեկ ամիս առաջ էր քննել ԺՅԿ-ի միջնորդությունը, սակայն վճիռը կայացրեց միայն 2010 թվականի հունվարի 21-ին: Թուրք վերլուծաբանները ՍԴ այդ որոշումը կապում են գերագույն դատարանի անդամների «սպասողական դրության» հետ, քանի որ ՍԴ-ն վճիռը կայացրեց այն նույն օրը, երբ ավարտին մոտեցավ Գլխավոր շտաբի (ԳՇ) Յատուկ նշանակության ուժերի հրամանատարությունում 26 օր տեւած խուզարկությունը, ինչն աննախադեպ էր Թուրքիայի ողջ պատմության մեջ:

Այժմ ՍԴ կայացրած վճռով մեջտեղ եկավ համաքաղաքացիական դատարաններում զինվորականների՝ դեռեւս չավարտված դատական գործերի հարցը, որոնցից շատերը մեղադրվում են «էրգենեքոն» ընդհատակյա խմբավորմանն աջակցելու մեջ: Թուրքական օրենսդրության համաձայն, եթե դատական գործընթացի ժամանակ ընդունվում է նոր օրենք, ապա դրա համապատասխան դրույթները տարածվում են բոլոր չավարտված գործընթացների վրա: Սակայն այս պարագայում խոսքը ոչ թե նոր օրենքի ընդունման, այլ՝ միայն ոչ վաղ անցյալում ընդունված նորմային ակտի չեղյալ հայտարարման մասին է:

Ներկայիս Թուրքիայում կարծիքներ են հնչում այն մասին, որ ընդհանրապես անհրաժեշտ է վերացնել ռազմական դատարանները, քանի որ դրանք չեն կայացնում «օբյեկտիվ ու անկախ» վճիռներ: Այս մասին բազմիցս նշել է նաև Մարդու իրավունքների գծով եվրոպական դատարանը: Կարելի է հեշտությամբ գլխի ընկնել, որ «էրգենեքոնի» գործով քաղաքացիական դատարանները կկայացնեն մեղադրական, իսկ ռազմական դատարանները՝ արդարացնող վճիռներ: Չպետք է նաև մոռանալ, որ Թուրքիայի ներկայիս Սահմանադրությունն ընդունվել է ռազմական խուճուղիի ժամանակ՝ 1982 թվականի նոյեմբերին, ինչը լայն լիազորություններ է շնորհել ռազմական դատարաններին: Միեւնույն ժամանակ, իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցության (ԱԶԿ) գործադրած ջանքերի շնորհիվ, 2006 թվականից սկսած, թուրքական ռազմական դատարաններն իրավունք չունեն դատել քաղաքացիական անձանց:

Ներկայում չի բացառվում, որ քաղաքացիական ու ռազմական դատարանների իրավասության շրջանակների խնդրի լուծումը տեղի ունենա հանրաքվեի միջոցով: Այս կապակցությամբ Թուրքիայի վարչապետ Էրդողանը նշել է. «Թուրքիան պետք է համակերպվի հանրաքվեների հետ:

Մեզ մոտ դժվար են անցկացվում հանրաքվեները, քանի որ նախկինում դրանց թվաքանակը մեծ չի եղել»:

Մինչդեռ, ԱԶԿ կողմնակիցների կարծիքով, ՍԴ որոշման այսօրինակ հապճեպությունը պայմանավորված է վերջին շրջանում երկրում ընթացող մի շարք գործընթացներով, որոնցում ներգրավված է երկրի զինվորական ղեկավարությունը. մասնավորաբար, այդ են վկայում Թուրքիայի փոխվարչապետ Բյուլենթ Արընչի դեմ մահափորձի եւ «Բալոզ» ռազմական հեղաշրջման պլանի հետաքննությունները: Ըստ ԱԶԿ կողմնակիցների՝ ՍԴ-ն գտնում է, որ պետական հեղաշրջմանը մասնակցելը ռազմական հանցագործություն է, եւ դրա քննումը պետք է տեղի ունենա ռազմական դատարաններում, մինչդեռ, իրենց կարծիքով, սահմանադրական կարգի դեմ կատարված հանցագործությունները պետք է քննվեն միայն համաքաղաքացիական դատարաններում:

Հարկ է նշել, որ սահմանադրական կարգի դեմ կատարված հանցագործություններ ասելով հասկացվում են «ահաբեկչությունը», «կազմակերպված հանցավորությունը», «հեղաշրջումն» ու «խռովությունը»: Ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ ելքը, ԱԶԿ համակիրների կարծիքով, Սահմանադրության փոփոխումն է:

Միեւնույն ժամանակ, ընդդիմադիր ԺՀԿ-ի կողմնակիցները կարծում են, որ ՍԴ-ն իր արդարացի վճռով հավասարակշռություն հաստատեց թուրքական դատական համակարգում: Նրանց կարծիքով, վերջին շրջանում հաճախակի են դարձել իսլամամետ լրատվամիջոցների հարձակումները թուրք զինվորականների վրա: ԺՀԿ-ն կարծում է, որ ԱԶԿ-ն դիտավորյալ է վարկաբեկում զինվորականներին, որպեսզի կարողանա վերահսկել նրանց, եւ ԱԶԿ-ից պահանջում է վերջ դնել «քաղաքացիական բռնապետությանը» (հիշեցնենք, որ ԺՀԿ-ի ու զինվորականության միջեւ սերտ կապեր հաստատվել են դեռեւս հանրապետության հիմնադրման ժամանակ):

Ինչ վերաբերում է Եվրամիությանը (ԵՄ), ապա հարկ է նշել, որ այն մեծ տեղ է հատկացնում Թուրքիայի ներքաղաքական խնդիրներին: Թիվ 5918 օրենքի փոփոխությունների չեղյալ հայտարարման կապակցությամբ ԵՄ-ը հայտնեց իր մտահոգությունը: Եվրախորհրդարանի անդամները նշեցին, որ Թուրքիայում տիրող իրավիճակը լուրջ խոչընդոտներ է առաջացնում ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում: Հարկ է նշել, որ ժամանակին Եվրահանձնաժողովն ու Եվրախորհրդարանը դրականորեն վերաբերվեցին թիվ 5918 օրենքի փոփոխությունների ընդունմանը: ԵՄ-ը ներկայում ողջունում է թուրքական նոր սահմանադրության ընդունման գաղափարը՝ գտնելով, որ այլ կերպ անհնար է

Թուրքիայում նախկինում ընդունված բարեփոխումների կենսագործումը:

Անսալով եվրոպական քննադատություններին՝ Էրդողանը նշել է, որ իրենք մտադիր են վերացնել թուրք զինվորականներին երկրի հանրային կյանքը վերահսկելու հնարավորություն ընծեռող «Անվտանգության, հասարակական կարգի ու օժանդակության» արձանագրությունը (թուրքերեն հապավումով՝ EMASYA): Բացի այդ, պլանավորվում է փոփոխությունների ենթարկել «Ազգային անվտանգության քաղաքականության փաստաթուղթը» (MGSB): Վերջինս ընդունվել է 2005 թվականի հոկտեմբերի 24-ին՝ երկրի նախագահ Ահմեթ Սեզերի նախագահությամբ կայացած Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) նիստում: Այս փաստաթղթի նախագծի վրա տարվող աշխատանքները տեւել են ավելի քան մեկ տարի: Դրանց մասնակցել են Թուրքիայում քաղաքականություն ձեւավորող բոլոր գերատեսչությունները: Սակայն փաստաթղթի նախապատրաստման մեջ վճռորոշ դերը խաղացել է ԳՇ-ը: Թուրքիայում այն անվանում են նաեւ «գաղտնի սահմանադրություն», «կարմիր գիրք», «կարմիր սահմանադրություն»:

Տեղեկատվություն ստանալու վերաբերյալ համապատասխան օրենքի համաձայն՝ տվյալ փաստաթղթի բովանդակությունը համարվում է գաղտնի եւ հրապարակման ենթակա չէ, քանի որ այն պետական գաղտնիք է ներկայացնում: Այս օրենքը խախտած անձինք ՔՕ համապատասխան հոդվածներով պատժվում են տարբեր ժամկետներով բանտարկությամբ:

MGSB-ում փոփոխություններ կատարելու Էրդողանի նախաձեռնությունը պայմանավորված է արտաքին եւ ներքին ասպեկտներով: Առաջինի էությունն այն է, որ Անկարան սկզբունքորեն փորձում է փոխել իր աշխարհաքաղաքական «դիրքավորվածությունն» ինչպես տարածաշրջանում, այնպես էլ աշխարհում: Մինչդեռ 2005 թվականին ընդունված «կարմիր գրքում» խոսքը միայն Թուրքիայի տարածաշրջանային կարգավիճակի ամրապնդման մասին էր:

2010թ. հունվարի 4–8-ը Ստամբուլում տեղի ունեցած դեսպանների կոնֆերանսի ժամանակ, որին մասնակցում էին 200 թուրքական դեսպաններ, Ահմեթ Դավութօղլուն հայտարարեց, որ Թուրքիայի ռազմավարական նպատակը ոչ թե տարածաշրջանային, այլ համաշխարհային պետության դերն է, ինչին նպաստում են նրա եզակի աշխարհագրական դիրքը, պատմական ու դիվանագիտական փորձը:

Ինչ վերաբերում է ներքին ասպեկտին, ապա «գաղտնի սահմանադրության» մշակման գործում Էրդողանն առաջնահերթությունը, բնականաբար, տալիս է ոչ թե ռազմական, այլ քաղաքացիական ինստիտուտ-

ներին: Այսինքն՝ այս հարցում զինվորականներին հատկացվում է երկրորդական դեր, ինչը համապատասխանում է Թուրքիայի քաղաքական կյանքում բանակի դերի նվազման ԵՄ պահանջներին: Բացի այդ, փոփոխված տարբերակում վերացվելու է ներքին սպառնալիքի մասին դրույթը: Ներքին սպառնալիք ասելով հասկացվում են ձախ արմատականությունը, ֆունդամենտալիզմն ու ծայրահեղականությունը: Այս կապակցությամբ Էրդողանը նշել է. «Չի կարելի սեփական քաղաքացիներին դիտարկել որպես սպառնալիք, լոյալության սկզբունքի հիման վրա նրանց դասակարգել խմբերի: Չի կարելի մտածել անցյալ հարյուրամյակի նման»:

Ինչ վերաբերում է EMASYA-ին, ապա այն կնքվել է 1997 թվականի հուլիսի 7-ին՝ ԳՇ-ի ու Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) միջև եւ «կարմիր գրքի» բաղկացուցիչ մասերից է: ԳՇ-ի կողմից արձանագրությունը ստորագրել է Չեթին Դոդանը, որի անունը շոշափվում է «Բալյոզ» անվանումը ստացած ռազմական հեղաշրջման պլանի մշակման մեջ: 27 հոդվածից բաղկացած այս արձանագրության համաձայն՝ ռազմական ստորաբաժանման հրամանատարն արտակարգ դրության (հասարակական անկարգությունների) ժամանակ կարող է զինվորներ ուղարկել նահանգ՝ առանց նահանգապետի նախնական համաձայնության: Այսինքն՝ թուրքական բանակը ներքաղաքական ճգնաժամի պարագայում իրավասու է դիմելու վճռորոշ միջոցների կիրառմանը՝ առանց քաղաքացիական կառույցների թույլտվության:

ԵՄ-ը բազմիցս քննադատության է ենթարկել այս արձանագրությունը, քանի որ այն զինված ուժերին հատկացնում է եվրոպական նորմերին հակասող ներքաղաքական դեր: Այս կապակցությամբ Էրդողանը նշել է. «EMASYA-ի նման փաստաթուղթ չի կարող գոյություն ունենալ, եւ մենք անհրաժեշտ քայլեր ենք ձեռնարկում՝ այն վերացնելու ուղղությամբ: MGSB-ի վերանայման հարցն էլ բարձրացվելու է ԱԱԽ-ում, ինչից հետո կկայացվեն համապատասխան վճիռներ»: Մի շարք քաղաքական դիտորդներ երկրի անվտանգության ռազմավարության փոփոխության Էրդողանի մտադրությունն անվանել են «պատմական», քանի որ Էրդողանն իր բարեփոխումների նախաձեռնությամբ ձգտում է վերացնել շուրջ 90 տարի երկրում տիրող դրվածքը եւ Թուրքիայի պատմության մեջ նոր էջ բացել:

Իր հերթին նախագահ Գյուլն ասել է. «Ես կարծում եմ, որ մենք EMASYA արձանագրության կարիքը չունենք»: Եվ եթե դա տեղի ունենա, ապա այսուհետ թուրք զինվորականներն իրավունք չեն ունենա ուժ կիրառելու՝ առանց քաղաքացիական մարմինների թույլտվության:

Բնականաբար, ԱԶԿ-ի հակառակորդները քնած չեն եւ բոլոր ջանքերը գործադրում են նրա պլանները խափանելու համար: Այդ մասին է խոսում նաեւ այն հանգամանքը, որ 2010 թվականի հունվարի 28-ին Թուրքիայի գլխավոր դատախազ Աբդուռահման Յալչընքայան գաղտնի հանդիպում ունեցավ ՍԴ նախկին նախագահ Մուսթաֆա Բումինի հետ: Վճռաբեկ դատարանում մեկ ժամ տեւած հանդիպման ժամանակ քննարկվել է ԱԶԿ-ի փակման հարցը, ինչի արդյունքում քաղաքական գործունեությամբ զբաղվելուց պետք է զրկվեն վարչապետ Էրդողանը, նախագահ Գյուլը եւ այլ անվանի ԱԶԿ-ականներ: Այս նպատակին հասնելու համար նախատեսվում է օգտագործել ԱԶԿ-ի կողմից ապօրինաբար թուրք զինվորականների հեռախոսային գաղտնալսումների խնդիրը, ինչը վերջին շրջանում Թուրքիայում մեծ աղմուկ էր հանել:

Այսպիսով, մենք ականատեսն ենք թուրքական զինվորականության եւ քաղաքական իշխանության պայքարի հերթական փուլին, ինչը շիկանալու մեծ հավանականություն ունի:

## **ԹՈՒՐՔ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ ԲԵՆԻԿԱՆԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

Հարաբերությունները Բուշ կրտսերի վարչակազմի օրոք

1947թ. ԱՄՆ-ում «Թրումենի հայեցակարգի» հռչակումից հետո Թուրքիան դասվեց ԱՄՆ մերձավորագույն դաշնակիցների թվում՝ միջազգային հարաբերություններում գրեթե միշտ հանդես գալով ԱՄՆ դիրքորոշումների աջակցությամբ եւ, համապատասխանաբար, օգնություն ու պաշտպանություն ստանալով նրանից: Սառը պատերազմի ավարտից եւ խորհրդային սպառնալիքի վերացումից հետո թվում էր, թե Թուրքիայի նշանակությունը Արեւմուտքի եւ, մասնավորապես, ԱՄՆ-ի համար կնվազի: Թուրքիան, մինչդեռ, ակտիվորեն ներգրավվեց Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում, ինչպես նաեւ սեւծովյան տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական նոր գործընթացներում: Թե՛ Ջորջ Բուշ ավագի եւ թե՛ Բիլ Բլինթոնի վարչակարգերն ակտիվորեն նպաստում էին նշված տարածաշրջաններում Թուրքիայի դերակատարման բարձրացմանը:

Սառը պատերազմի ավարտին հաջորդող շրջանում թուրք-ամերիկյան հարաբերությունների բարձրակետը, թերեւս, 1999թ. էր, երբ թուրքական իշխանությունները ԱՄՆ հատուկ ծառայությունների օգնությամբ ձերբակալեցին Քրդական աշխատավորական կուսակցության առաջնորդ Օջալանին, իսկ 1999թ. դեկտեմբերին, նախագահ Բլինթոնի ակտիվ աջակցությամբ, Հելսինկիում կայացած Եվրամիության գագաթաժողովում Թուրքիային պաշտոնապես Եվրամիության անդամակցության թեկնածուի կարգավիճակ տրամադրելու որոշում կայացվեց:

Սակայն նախագահ Բուշ կրտսերի վարչակազմի տարիներին, հատկապես սկսած 2003-ից, երկկողմ հարաբերություններն աստիճանական անկում արձանագրեցին՝ լուրջ տարածայնություններ առաջ բերելով «ռազմավարական դաշնակիցների միջեւ»:

Կարելի է առանձնացնել նման զարգացումների մի քանի հիմնական պատճառ. առաջինը՝ Թուրքիայի ներքաղաքական կյանքում տեղի ունեցող դինամիկ փոփոխություններն են, որոնք նկատելի դարձան հատկապես 2002թ. նոյեմբերին իսլամական Արդարություն եւ զարգացում կուսակցության իշխանության գալուց հետո: Այս գործընթացի



արդյունքում ժամանակակից թուրք հասարակությունն ու պետությունը շատ ավելի դժվարընկալելի են դարձել ԱՄՆ քաղաքական եւ վերլուծական շրջանակների համար: Աշխարհիկ քենալականները շարունակում են զգալի ազդեցություն ունենալ պետական տարբեր ինստիտուտների վրա, սակայն նրանք հարկադրված են իրենց ազդեցության մի որոշակի հատվածը զիջել այն քաղաքական ուժերին, որոնց հայացքները ձեւավորվել են կրոնի ազդեցությամբ:

Երկկողմ հարաբերությունների վատթարացման հաջորդ կարեւոր պատճառը 2003թ. ամերիկյան ներխուժումն է Իրաք: Ինչպես հայտնի է, ԱՄՆ-ն ակտիվորեն փորձում էր ստանալ Թուրքիայի համաձայնությունն այդ երկրի տարածքից Իրաք ներխուժման հարցում: Սակայն շուրջ վեց ամիս տեւած բանակցություններից հետո, 2003թ. մարտի 1-ին Թուրքիայի խորհրդարանը մերժեց ամերիկյան կողմի առաջարկը: Իրաքի խնդրում թուրք-ամերիկյան հակասությունները չէին սահմանափակվում միայն Թուրքիայի տարածքը որպես Իրաք ներխուժման պլանցդարմ տրամադրելու պաշտոնական Վաշինգտոնի խնդրանքի մերժմամբ: Թուրքիայում լուրջ կասկածներ կային Յուսիսային Իրաքի քրդաբնակ շրջաններում ԱՄՆ վարած քաղաքականության առնչությամբ: Թուրքական որոշ շրջանակներ գտնում էին, որ ԱՄՆ-ն անուղղակիորեն աջակցում է այդ տարածքում անկախ քրդական պետության ստեղծմանը, ինչը լուրջ խթան կհանդիսանա Թուրքիայի քրդաբնակ շրջաններում ընթացող անջատողական շարժման ակտիվացման համար: Չնայած Բուշ կրտսերի վարչակազմի տարբեր բարձրաստիճան ներկայացուցիչներ հայտարարում էին, որ չեն ցանկանում հասնել Իրաքի մասնատմանը եւ անկախ քրդական պետության ստեղծմանը, այդ հավաստիացումները միանշանակորեն չէին ընդունվում թուրքական քաղաքական շրջանակների կողմից:

2003–2008թթ. արձանագրված երկկողմ հարաբերությունների վատթարացման մեկ այլ կարեւոր պատճառ էր Թուրքիայի աստիճանաբար սերտացող հարաբերությունները Իրանի եւ Սիրիայի հետ, ինչն, իհարկե, չէր կարող գոհացնել պաշտոնական Վաշինգտոնին եւ որոշակի ազդեցություն չթողնել թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա:

Որոշակիորեն տարբերվում էին նաեւ ԱՄՆ-ի եւ Թուրքիայի դիրքորոշումները պաղեստինա-իսրայելական հակամարտության խնդրում: 2006թ. հունվարին Պաղեստինյան ինքնավարությունում կայացած խորհրդարանական ընտրություններից (որոնցում հաղթանակ էր տարել ՅԱՄԱՍ շարժումը) ընդամենը մի քանի շաբաթ անց Անկարա այցելեց եւ Էրդողանի հետ հանդիպեց ՅԱՄԱՍ-ի բարձրաստիճան պատվիրակությունը, մինչդեռ Բուշ կրտսերի վարչակազմը ՅԱՄԱՍ-ին ընդգրկել էր

ահաբեկչական կազմակերպությունների ցանկում եւ քայլեր էր ձեռնարկում նրան մեկուսացնելու ուղղությամբ: Միաժամանակ էր դողանի գլխավորած կառավարությունը ժամանակ առ ժամանակ քննադատում էր Գազայի հատվածում եւ Արեւմտյան ափում Իսրայելի վարած քաղաքականությունը:

### **Հարաբերությունների զարգացումը Օբամայի պաշտոնավարման ընթացքում**

2009թ. հունվարին ստանձնելով ԱՄՆ նախագահի պաշտոնը՝ Բարաք Օբաման ձեռնամուխ եղավ արտաքին քաղաքականության ոլորտում մի շարք փոփոխությունների իրականացմանը՝ այդ գործընթացում որոշակի դեր վերապահելով նաեւ Թուրքիային: Օբաման ԱՄՆ արտաքին քաղաքական թիվ մեկ նպատակ հռչակեց Աֆղանստանում իրավիճակի կայունացումը, ինչպես նաեւ Պակիստանում հնարավոր քառսի կանխումը: Այդ նպատակին է ուղղված նաեւ Օբամայի՝ 2009թ. դեկտեմբերի 1-ին Աֆղանստան 30.000 ամերիկյան նոր զինվորներ ուղարկելու որոշումը: Աֆղանստանում հայտարարված նպատակներին հասնելու համար ԱՄՆ նոր վարչակազմին անհրաժեշտ էր նաեւ պահպանել Իրաքում ձեւավորված փխրուն կայունությունը, ինչը հնարավորություն կստեղծի մինչեւ 2011թ. ավարտը դուրս բերել ամերիկյան ուժերն այդ երկրից, եւ տնտեսական ճգնաժամի պայմաններում առկա սակավաթիվ ռեսուրսները հիմնականում ուղղել Աֆղանստանում եւ Պակիստանում իրավիճակի բարելավմանը: Միաժամանակ Օբաման հայտարարեց նաեւ Իրանի հետ ուղղակի երկխոսություն սկսելու պատրաստակամության մասին՝ հրաժարվելով Բուշ կրտսերի վարչակազմի՝ Իրանում կրոնապետական կարգերի տապալմանն ուղղված քաղաքականությունից: Թվարկված խնդիրների լուծման համար Թուրքիան կարող է զգալի դերակատարություն ստանձնել:

Թուրքիան Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման թիվ մեկ տարանցիկ ուղին է, թեեւ Քրդական աշխատավորական կուսակցության դեմ պայքարի նպատակով թուրքական հնարավոր ներխուժումը Յյուսիսային Իրաք ի վիճակի է լրջորեն ապակայունացնել իրավիճակը ողջ երկրում՝ ավելի դժվարացնելով ամերիկյան զորքերի դուրսբերման խնդիրը:

Պաշտոնական Անկարային որոշակի դերակատարություն է վերապահված նաեւ Աֆղանստանում: Թուրքիան արդեն երկու անգամ ստանձնել է Աֆղանստանում տեղակայված միջազգային ուժերի հրամանատարությունը: 2009թ. հոկտեմբերի 31-ին Թուրքիային հանձնվեց

միջազգային ուժերի Քաբուլում տեղակայված զորքերի հրամանատարությունը: 2009թ. հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին Թուրքիան հավելյալ 950 զինվոր ուղարկեց Աֆղանստան: Հարկ է արձանագրել, որ չնայած ամերիկյան կողմի առաջարկներին, որոնք եւս մեկ անգամ թուրքական կողմին ներկայացվեցին Օբամայի՝ 2009թ. դեկտեմբերի 1-ի որոշումից հետո, թուրքական զորքերը չեն մասնակցում մարտական գործողությունների: Այնուամենայնիվ, մահմեդական երկրի շուրջ 1600 զինվորների առկայությունը միջազգային ուժերի կազմում նպաստում է Աֆղանստանում իրականացվող գործողությունը քրիստոնեություն–իսլամ հակամարտություն ներկայացնելու «Ալ-Քաիդայի» քարոզչության դեմ իրականացվող ամերիկյան հակաքարոզչության հաջողությանը: Միաժամանակ Աֆղանստանում Թուրքիան ներգրավված է նաեւ «Նահանգային վերականգնողական թիմերի» աշխատանքում, որոնց հիմնական խնդիրը քաղաքացիական ենթակառուցվածքների վերականգնմանն աջակցելն է:

Թուրքիան սերտ հարաբերություններ ունի Պակիստանի հետ եւ ի վիճակի է որոշակի դերակատարություն ստանձնել նաեւ Աֆղանստան–Պակիստան հարաբերությունների կարգավորման գործընթացում: Աֆղանստանի եւ Պակիստանի հետ սերտ հարաբերությունների վկայությունն էր 2008թ. դեկտեմբերին Թուրքիայում կայացած Աֆղանստանի նախագահ Համիդ Քարզայի եւ Պակիստանի նախագահ Ասիֆ Ալի Ջարդարիի հանդիպումը:

Թուրքիան ազդեցություն կարող է ունենալ նաեւ Իրան–ԱՄՆ հարաբերություններում: Եթե Բուշ կրտսերի վարչակազմը միանշանակ բացասական էր գնահատում թուրք-իրանական սերտացող հարաբերությունները, ապա Իրանի հետ ուղղակի երկխոսություն սկսելու նախաձեռնությամբ հանդես եկող Օբամայի համար թուրք-իրանական սերտ կապերը որոշակի հնարավորություն են՝ Իրանի իշխանությունների հետ անուղղակի շփումների հաստատման եւ փոխադարձ վստահության ձեւավորման առումով:

Օբամայի վարչակազմը Թուրքիայի համար դերակատարություն է տեսնում նաեւ ռուս-ամերիկյան հարաբերություններում: Չնայած Ռուսաստանի հետ հարաբերությունների վերագործարկման մասին արվող հայտարարություններին, ակնհայտ է, որ մի շարք ոլորտներում ռուս-ամերիկյան մրցակցությունը շարունակվելու է, չնայած այն չի ունենա այնպիսի բացահայտ դրսեւորումներ, ինչը բնորոշ էր Բուշ կրտսերի նախագահության հատկապես երկրորդ շրջանին: Ռուս-ամերիկյան մրցակցության կարեւոր օղակներից մեկը շարունակելու է մնալ նախկին խորհրդային հանրապետություններում ազդեցության համար մղվող

պայքարը: Թուրքիան ի վիճակի է որոշակի դերակատարություն ստանձնել հատկապես Չարավային Կովկասում ընթացող գործընթացներում: Անկախ վերջին տարիներին նկատվող ռուս-թուրքական հարաբերությունների բարելավման միտումից, որի հիմնական շարժիչ ուժը փոխադարձ տնտեսական շահերն են, ԱՄՆ կարծիքով՝ Չարավային Կովկասում Թուրքիայի ազդեցության աճն օբյեկտիվորեն հանգեցնելու է Ռուսաստանի դիրքերի որոշակի թուլացմանը, առնվազն երկարաժամկետ կտրվածքով: Յենց այս տեսանկյունից էլ ԱՄՆ-ի համար բավականաչափ կարելուր նշանակություն է ձեռք բերում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը, եւ պատահական չէ, որ ԱՄՆ-ը հստակորեն հանդես է գալիս այս գործընթացի շարունակման եւ հնարավորինս սեղմ ժամկետներում 2009թ. հոկտեմբերի 10-ին ստորագրված արձանագրությունների վավերացման օգտին:

Ամերիկյան նոր վարչակազմի արտաքին քաղաքական կարելուր նպատակներից մեկը արաբա-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման բանակցություններում կոնկրետ առաջընթացի արձանագրումն է, եւ այստեղ եւս Թուրքիան կարող է որոշակի դերակատարություն ստանձնել: Նշենք, որ 2008թ. Թուրքիայի միջնորդությամբ գաղտնի բանակցություններ էին ընթանում Սիրիայի եւ Իսրայելի միջեւ, որոնք ընդհատվեցին 2008թ. դեկտեմբերին Գազայի հատված իսրայելական ներխուժման հետեւանքով: Այնուամենայնիվ, չնայած այդ բանակցությունների փաստացի ձախողմանը, Թուրքիան շարունակվում է ընկալվել որպես հնարավոր միջնորդ արաբա-իսրայելական հարաբերությունների կարգավորման գործընթացում:

Միաժամանակ հարկ է ընդգծել, որ վերջին մեկ տարվա ընթացքում թուրք-իսրայելական հարաբերություններում նկատվող լարվածությունը զգալիորեն սահմանափակել է Թուրքիայի ռեսուրսներն այդ գործընթացում: Դեռեւս 2009թ. հունվարին Դավոսի համաշխարհային տնտեսական ֆորումի շրջանակներում Թուրքիայի վարչապետ Էրդողանի եւ Իսրայելի նախագահ Պերեսի միջեւ հրապարակային բանավեճից հետո սկսված հարաբերությունների վատթարացումը նոր թափ ստացավ 2010 հունվարին, երբ Իսրայելի փոխարտգործնախարար Դենի Այալոնը հրապարակայնորեն նվաստացրեց Իսրայելում Թուրքիայի դեսպանին: 2010թ. հունվարի 30-ին «Եվրոնյուս» հեռուստաալիքին տված հարցազրույցում Էրդողանը հերթական անգամ Իսրայելին մեղադրեց Գազայի հատվածում ֆոսֆորային ռումբերի կիրառման, խաղաղ բնակիչների սպանության եւ մարդու իրավունքների այլ խախտումներ իրականացնելու մեջ: Միաժամանակ Էրդողանը զգուշացրեց, որ Իսրայելը պետք է լրջորեն մտածի այն

հարցի շուրջ, թե ապագայում ինչ խնդիրներ կարող են ծագել նրա համար՝ Թուրքիայի պես գործընկերոջը կորցնելու դեպքում: Իսրայելի հետ վատթարացող հարաբերությունները որոշակի ազդեցություն ունեն նաև Թուրքիա–ԱՄՆ շփումներում: ԱՄՆ հրեական ազդեցիկ լոբբին լիովին ի վիճակի է լուրջ խոչընդոտներ ստեղծել պաշտոնական Անկարայի համար այդ խնդրում:

Այնուամենայնիվ, վերլուծելով 2009թ. ընթացքում թուրք-ամերիկյան հարաբերությունների ընթացքը՝ հարկ է արձանագրել, որ Բուշ կրտսերի իշխանության շրջանի հետ համեմատած, առկա է հարաբերությունների որոշակի բարելավում, միաժամանակ, ԱՄՆ-ին չի հաջողվել ամբողջովին իրականացնել Թուրքիայի հետ կապված իր նպատակները: Չնայած Աֆղանստան հավելյալ զինվորների ուղարկման փաստին, Թուրքիան շարունակում է հրաժարվել սեփական զինվորներին ռազմական գործողություններում օգտագործելու առաջարկից, թուրք-իսրայելական լարված հարաբերություններն ավելի են նվազեցրել արաբա-իսրայելական հակամարտությունում որեւէ տարբերակով միջնորդի դեր ստանձնելու Թուրքիայի հնարավորությունները, Թուրքիայի կողմից առաջ քաշվող նախապայմանների հետեւանքով լրջորեն վտանգված է նաև հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացը:

Միաժամանակ, կարելի է ենթադրել, որ ԱՄՆ նոր վարչակազմը կշարունակի Թուրքիայի հետ հարաբերություններն առնվազն առկա մակարդակի վրա պահպանելու քաղաքականությունը՝ խուսափելով դրանց վատթարացմանը նպաստող քայլերի իրականացումից:

## **ՌՈՒՄԱՍՏԱՆԸ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՎՈՋ Արտաշես Տեր-Չարությունյան**

Փետրվարի սկզբին Մոսկվայում գործող ժամանակակից զարգացման ինստիտուտը հրապարակեց զեկույց՝ «XXI դարի Ռուսաստանը. ցանկալի ապագայի պատկերը», որն առանձնահատուկ ուշադրության արժանացավ ինչպես ռուսաստանյան, այնպես էլ միջազգային փորձագիտական ու քաղաքական շրջանակների կողմից: Ձեկույցի առանձնահատկությունն այն է, որ՝

- ❖ այն հիմնարար քննադատության է ենթարկում ներկայիս Ռուսաստանում առկա քաղաքական, տնտեսական, սոցիալական ու անվտանգության համակարգերը,

- ❖ այդպիսով, փաստորեն, եզրակացնելով, որ վերջին տասը տարիներին ձեւավորված Ռուսաստանը, չնայած ձեռք բերած հաջողություններին, այնուամենայնիվ, չի կարողացել լուծել իր առջեւ ծառայած համակարգային խնդիրները վերը նշված ոլորտներում,

- ❖ եւ դրանք այնքան են սրվել, որ այլեւս առաջանում է ռուսական պետության լինել-չլինելու հարցը,

այլ այն, որ՝

- ❖ ինստիտուտը, ֆինանսավորվելով ՌԴ նախագահի աշխատակազմի կողմից ու տարաբնույթ հարցերի վերաբերյալ առաջարկներ պատրաստելով նրա համար<sup>1</sup>, այս զեկույցով ավելի շուտ կոչված է արտահայտելու, բացահայտելու ռուսական վերնախավի կամ առնվազն նրա մի մասի դիրքորոշումը երկրում առկա իրավիճակի ու առաջիկայում նախատեսվող գործողությունների վերաբերյալ,

- ❖ զեկույցը գալիս է լրացնելու վերջին շրջանում Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական դաշտերում նկատվող շահերի բախումը, ինչը շատերի համար անսովոր ու անսպասելի էր՝ վերջին տասնամյակում պոլտինյան վերահսկելի Ռուսաստանի ֆոնին:

### **Ձեկույցի հիմնական դրույթները**

Այն ուղին, որով ընթանում է ներկայիս Ռուսաստանը, ամրապնդում է հանքահումքային արտահանման վրա հիմնված տնտեսությունը, որի պարագայում անգամ ամենամեղմ կանխատեսումները չեն բացառում

«ծայրահեղ սցենարներ», որոնց վատագույն տարբերակները ենթադրում են՝

- ❖ տնտեսական կոլապս,
- ❖ տեխնոլոգիական, ըստ ամենայնի, այլևս անհաղթահարելի հետամնացություն,
- ❖ քաղաքական խոր ճգնաժամ,
- ❖ աշխարհաքաղաքական դիրքերի կորուստ,
- ❖ դեմոգրաֆիական աղետալի անկում՝ այդ թվում որակական իմաստով («ուղեղների արտահոսք»):

Որպեսզի Ռուսաստանը կարողանա հաղթահարել իր առջև ծառայած ու սպասվող խնդիրները եւ միջազգային ասպարեզում մասնակցել գլոբալ որոշումների կայացմանը, անհրաժեշտ է երկրի արդիականացում: Արդիականացումը պետք է լինի խոր, համակարգային ու վճռական: Ձեկույցի առանձնահատկություններից է այն, որ ընդունելով, թե Ռուսաստանում այլևս սպառվել է ցանկացած արդիականացման համար կարելու հասարակական աջակցության ռեսուրսը (նախկինում բազմիցս սկսված ու անավարտ մնացած, հետեւաբար՝ անարդյունավետ արդիականացումների պատճառով), պահանջվում է, որ արդիականացումը միաժամանակ վերաբերի ռուսական պետության բոլոր կենսական ոլորտներին՝

- ❖ քաղաքական (ընտրությունների միջոցով իշխանության փոփոխում ու հետեւաբար՝ իրական քաղաքական պայքար եւ քաղաքական ինստիտուտների կայացում),
- ❖ տնտեսական (հավասար հնարավորություններ ստեղծող ու պետական միջամտությունից հնարավորինս զերծ տնտեսական դաշտ),
- ❖ սոցիալական (պետականին զուգահեռ՝ սոցիալական ապահովության մասնավոր համակարգի զարգացում),
- ❖ անվտանգության (անվտանգության ապահովման պետական ապարատի՝ բանակ, ՆԳՆ, հատուկ ծառայություններ, կրճատում<sup>2</sup> եւ գործառույթների հստակեցում):

Ձեկույցի հաջորդ կարելու դրույթն այն է, որ հետինդուստրիալ ժամանակաշրջանում արդիականացումն անհնար է իրականացնել անազատության, նեոֆեոդալիզմի տարրեր պարունակող պայմաններում, եւ որպես զարգացման անհրաժեշտ երաշխիք նշվում է մարդու ազատությունների ու իրավունքների ապահովումը, ինչը հնարավորություն կտա լիարժեք օգտագործել մարդու ստեղծագործական ներուժը:

Եվ միայն այդ պայմաններում հնարավոր կլինի ապահովել Ռուսաստանի շարունակական զարգացումը՝ արդիականացումից հետո:

### **Իրավիճակային դիտարկում**

Ռուսաստանում այդպիսի գաղափարների նման բարձր մակարդակով հրապարակ գալը միգուցե անակնկալ չէր տեղի քաղաքական ու բիզնես էլիտայի համար: Չպետք է մոռանալ, որ 2010թ. Ռուսաստանը մուտք գործեց 7.9% տնտեսական անկմամբ, ինչը ոչ միայն ամենամեծն է G8-ի, այլև BRIC (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան) անդամ պետությունների շարքում:

Սակայն տնտեսական անկումը գլխավոր խնդիրը չէ: Տնտեսական ճգնաժամը ցույց տվեց Ռուսաստանի տնտեսության ողջ խոցելիությունը: Հանքահումքային ռեսուրսներից եւ ռազմական տեխնիկայից զատ, այսօր միջազգային շուկայում այդ երկիրը չի վաճառում քիչ թե շատ էական եւ ոչ մի ապրանք կամ ծառայություն: Նշված իրողությունը պատճառ հանդիսացավ, որ անցած աշնանից Ռուսաստանում ամենաբարձր մակարդակով մեկնարկի տնտեսական նոր բարեփոխումների թեման, որի գլխավոր կետերից է պետության դերի սահմանափակումը տնտեսության մեջ, քանզի տնտեսական ճգնաժամը ցույց տվեց նաեւ պետական կորպորացիաների սակավարդյունավետությունը ռեսուրսների կառավարման ու նոր տեխնոլոգիաների ներդրման հարցում<sup>3</sup>:

Սակայն սկիզբ առած գործընթացը չի սահմանափակվում միայն տնտեսական դաշտով: Անցած տարվա հոկտեմբերին Ռուսաստանում կայացած տարբեր մակարդակի ընտրությունների ժամանակ ու դրանցից հետո հրապարակայնորեն ի հայտ եկան Միասնական Ռուսաստան եւ Արդար Ռուսաստան կուսակցությունների միջեւ հակասությունները: Թեեւ ընտրությունների արդյունքները չվերանայվեցին, սակայն պուտինյան Ռուսաստանի պատմության մեջ առաջին անգամ հրապարակ իջան նման կարգի քաղաքական հակասություններ:

Չնայած քիչ հավանական է հատկապես արեւմտյան մամուլում պարբերաբար շրջանառվող տարբերակը՝ Պուտին – Մեդվեդեւ լուրջ հակասությունների մասին, սակայն միեւնույն է՝ հարցն այդքանով չի փակվում: Նորությունն այն է, որ, ըստ ամենայնի, ամենաբարձր մակարդակով որոշում է կայացվել (քանի որ Ռուսաստանում նման հարցերը կարող են որոշվել միայն ամենաբարձր մակարդակով), մեղմ ասած, վիճարկել երկիրը առաջնորդելու Միասնական Ռուսաստանի մենա-



շնորհը: Նույն տրամաբանության մեջ են նաև փետրվարին տեղ գտած սկանդալային երկու դեպքերը, երբ ռուսաստանյան Առաջին ալիքով նախ Սենատի նախագահ, Արդար Ռուսաստանի ղեկավար Սերգեյ Միրոնովը, իսկ հետո նաև փոխվարչապետ, ֆինանսների նախարար Ալեքսեյ Կուդրինը քննադատեցին Սիասնական Ռուսաստանի ներքին եւ սոցիալ-տնտեսական քաղաքականությունը (Միրոնովը նաև քննադատեց վարչապետ Պուտինին):

### **Չետելություններ**

Չաշվի առնելով զեկույցում տեղ գտած եզրակացությունների սրությունը, զուգահեռ՝ Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական դաշտերում սկիզբ առած զարգացումները եւ որոշումների կայացման ռուսական մեխանիզմում առկա ավանդույթները՝ չպետք է բացառել, որ Ռուսաստանի արդիականացմանն ուղղված քայլերին մենք ականատես կլինենք արդեն շուտով:

Այս պահի դրությամբ պետք է քիչ հավանական համարել, որ ռուսական պետության հերթական արդիականացման գործընթացը ձեռք բերի (ինչպես շատ հաճախ) անկառավարելի բնույթ: Թեև մյուս կողմից՝ կախված ձեռնարկվելիք բարեփոխումների խորությունից, այն կարող է ունենալ նաև չնախատեսված հետեւանքներ:

Նկատի ունենալով Ռուսաստանի քաղաքական, տնտեսական ու գաղափարախոսական ազդեցությունը հետխորհրդային պետությունների վրա՝ հավանական է, որ բարեփոխումների ալիքն անցնի նաև վերջիններիս: Այդ տարբերակը կարող է անգամ անխուսափելի լինել Ռուսաստանում արդիականացման հաջող ընթացքի դեպքում:

Եվ վերջում. այդ թվում Չայաստանի համար կարելու է դառնում, թե արդիականացման ճանապարհին Ռուսաստանն արտաքին քաղաքական ինչ պայմանավորվածությունների կհանգի այլ տերությունների հետ: Չմոռանանք, որ ռուսական բոլոր արդիականացումների ժամանակ այդ երկիրը կարողացել է արտաքին քաղաքական անակնկալներ մատուցել:

---

<sup>1</sup> Ժամանակակից զարգացման ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի նախագահն է Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևը:

<sup>2</sup> Օրինակ, առաջարկվում է լուծարել Անվտանգության դաշնային ծառայու-

թյունը (ԱԴԾ) եւ ՆԳՆ-ն: Առաջինի գործառույթներն անցնելու են ստեղծվելիք Չակահետախուզության դաշնային ծառայությանը, որը պետք է իրականացնի միայն հակահետախուզական գործառույթ եւ երկրի ողջ տարածքում չունենա ԱԴԾ-ի նման ճյուղավորում: ՆԳՆ գործառույթները բաժանվում են մի քանի մարմինների միջեւ:

<sup>3</sup> Օրինակ, ամերիկյան Stratfor վերլուծական կենտրոնը անցած հոկտեմբերին հրապարակեց մի վերլուծություն (The Kremlin Wars), ուր ասված էր, թե ռուսական վերնախավի համեմատաբար լիբերալ մասը՝ նախագահ Մեդվեդևի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Վլադիսլավ Սուրկովի գլխավորությամբ, օգտագործելով Ռուսաստանի տնտեսական ներկայիս դժվարությունները, ձեռնամուխ է եղել փոխվարչապետ Իգոր Սեչինի առաջնորդությամբ գործող մյուս կլանի (Անվտանգության դաշնային ծառայությունը ներկայացնող մարդկանց) դիրքերի թուլացմանը Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական դաշտերում:

## **ԻՐԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ**

### ***Սեւակ Սարուխանյան***

Վերջին տարիներին Իրանը տարածաշրջանում ունեցած իր դիրքերը բավական հաջող օգտագործում է գլոբալ հարթությունում սեփական դիրքերը պաշտպանելու համար: Իսլամական հեղափոխությունից հետո Թեհրանը Մերձավոր և Միջին Արևելքում ստեղծել է իրեն ենթակա կրոնական և քաղաքական մի շարք կազմակերպություններ, որոնց գործունեության հիմնական նպատակներից է իրանական շահերի պաշտպանությունը: Դրանցից ամենաուժեղն ու ազդեցիկը լիբանանյան «Հիզբալլահ» ռազմաքաղաքական կազմակերպությունն է, որը ստեղծվել է իրանական իշխանությունների ակտիվ մասնակցությամբ:

Վերջին տարիների հիմնական հաջողություններից կարելի է համարել Իրանի դիրքերի ամրապնդումն այնպիսի կազմակերպություններում, որոնք նախկինում առավելապես ղեկավարվել և ֆինանսավորվել են արաբական պետությունների կողմից: Պաղեստինյան «Համաս» կազմակերպությունը, որը նախկինում հիմնականում կապված էր սիրիական և սաուդյան իշխանությունների հետ, այսօր առաջնային աջակցությունն ստանում է Իրանից, որի ազդեցությունը «Համասի» վրա, ըստ որոշ իսրայելական վերլուծաբանների, դարձել է որոշիչ:

Իրանի ակտիվացումը տարածաշրջանում անմիջականորեն կապված է երկու հնարավոր սցենարների հետ, որոնք կարող են տեղ գտնել Միջին Արևելքում.

1. Իրանի միջուկային ծրագիրը կարող է հանգեցնել Իրանի դեմ ռազմական գործողությունների Իսրայելի և/կամ Միացյալ Նահանգների կողմից: Ուժեղացնելով դիրքերը Վաշինգտոնի և Թել Ավիվի դեմ պայքարող ուժերի շրջանակներում՝ Իրանը փորձում է ստիպել հակառակորդներին՝ հրաժարվել հնարավոր բախումից, քանզի եթե այն տեղի ունենա, Իրանն իր դաշնակիցների օգնությամբ հակամարտությունը կտարածի ողջ տարածաշրջանում:

2. Եթե Իրանը խուսափի ռազմական բախումից և հաջողությամբ ավարտին հասցնի միջուկային ծրագիրը, կդառնա տարածաշրջանային ամենաազդեցիկ տերությունը: Այս պայմաններում արաբական աշխար-

հում, որտեղ Իրանն ընդամենը մեկ դաշնակից պետություն ունի՝ Սիրիան, Թեհրանը սկսելու է պայքարել գերիշխանություն հաստատելու ուղղությամբ: Այս պայքարում օգտագործվելու են հենց այն կազմակերպությունները, որոնք այսօր ֆինանսական եւ ռազմական օժանդակություն են ստանում Իրանից:

Վերը նշված սցենարները հիմնականում միջնաժամկետ եւ երկարաժամկետ հեռանկարների համար են: Իսկ այսօր տարածաշրջանային զարգացումներից Իրանի համար ամենակարեւորներն են գործընթացներն Իրաքում եւ Աֆղանստանում. այս երկու պետություններում առկա են թե՛ քաղաքացիական պատերազմներ, թե՛ արտասահմանյան ռազմական ներկայություն եւ թե՛ հնարավոր ապակայունացնող վտանգ Իրանի համար: Այս տեսանկյունից հարաբերություններն Իրաքի եւ Աֆղանստանի հետ Թեհրանի համար առաջնային նշանակություն ունեն:

#### **Իրան-իրաքյան նոր «պատերազմ»**

ԱՄՆ նախագահի ընտրություններից հետո պարզ դարձավ, որ ամերիկյան զորքերը հեռանալու են Իրաքից: Այդ պահից, գուցե, Իրանի համար առաջացավ խնդիր՝ ինչպե՞ս աշխատել համեմատաբար անկախացած իրաքյան իշխանությունների հետ: Հարցի կարեւորությունը պայմանավորված է նաեւ նրանով, որ Թեհրանը վերջին տարիներին կարողացել է նպաստել Իրաքի ապակայունացմանը, քանզի այն համարել է անմիջական հարված ամերիկյան դիրքերին, սակայն մյուս կողմից նպաստել է Իրաքի միասնականության պահպանմանը: Այս գործում Թեհրանն ակտիվորեն աշխատել է Անկարայի հետ, քանի որ թե՛ Թուրքիային, թե՛ Իրանին ձեռնտու չէ անկախ քրդական պետության կազմավորումն իրենց անմիջական սահմաններին:

Այսօր Իրանն ստիպված է մշակել նոր «իրաքյան» քաղաքականություն, որում ամերիկյան գործոնի դերն այնքան նշանակալի չի լինելու, ինչպես նախկինում: Փոխվել է նաեւ քաղաքական իրադրությունը բուն Բաղդադում, որտեղ տեղի իշխանությունները սկսել են իրենց ավելի վստահ զգալ: 2009-ի վերջին ամսվա ընթացքում Իրանի քայլերն իրաքյան ուղղությամբ ցույց տվեցին, որ Թեհրանը հետեւողականորեն պաշտպանելու է սեփական շահերն Իրաքում՝ օգտագործելով նաեւ ռազմական միջամտության հնարավորությունները:

2009-ի դեկտեմբերի 18-ին իրանական South Oil Co. ընկերությունը բանակային զորամիավորման ուղեկցությամբ ներխուժեց Իրաքի

տարածք եւ զավթեց իրաքյան Էլ-Ֆաքքա նավթավայրի 4-րդ հատվածը՝ հայտարարելով այն Իրանի սեփականություն: Չատկանշական է Իրաքի արտաքին գործերի նախարարի հայտարարությունն այս առնչությամբ, որում նա փաստացի ընդունեց, որ հարաբերություններն Իրանի հետ բավական լարված են. «Մենք շատ խնդիրներ ունենք իրանցիների հետ, դրանց մի մասն առաջացել է դեռ 2003-ին: Մենք խնդիրներ ունենք սահմանների, ջրային ռեսուրսների հետ կապված: «Իրանական գործը» ամենածավալունն է մեր նախարարությունում»: Չնայած իրանցիները տարեսկզբին լքեցին իրաքյան հանքավայրը, բայց իրենց քայլը բնութագրեցին որպես «բարի կամքի դրսևորում»: Նշենք, որ վերը նշված հանքավայրի հանդեպ թեհրանը երբեւէ մինչ այդ հավակնություններ չի ունեցել:

Իրանի քաղաքականությունն Իրաքում նաեւ պայմանավորված է նրանով, որ Իրաքի իշխանությունները, գիտակցելով ամերիկացիների հեռանալուց հետո ստեղծվելիք տնտեսական ազատության գինը, որը զոյանալու է նավթի արտահանման հսկայական ծավալներից, ցանկանում են ազատվել Իրանի «բարեկամությունից»: Այս քաղաքականության շրջանակներում իրանական ընկերություններն սկսել են դուրս մղվել Իրաքից, ինչի դրսևորումներից է 2009-ի նոյեմբերին իրանական երկու ընկերությունների հետ կնքված մոտ 5 մլրդ ԱՄՆ դոլար արժողության պայմանագրերի վերանայումն Իրաքի իշխանությունների կողմից՝ հօգուտ սաուդյան եւ քուվեյթյան ընկերությունների: Բացի այդ, Բաղդադն արդեն հայտարարել է, որ պատրաստվում է հաջորդ տարվանից հրաժարվել էլեկտրաէներգիա ներկրել Իրանից՝ փոխարինելով այն սաուդյան էլեկտրաէներգիայով:

Իրաքյան քաղաքականությունն Իրանի նկատմամբ երկարաժամկետ կտրվածքով ավելի է կոշտանալու: Սա բերելու է թեհրանի հակազդեցությանը, այդ թվում նաեւ իր դաշնակից կազմակերպությունների եւ խմբերի կողմից քաղաքական ապակայունացման տարածման միջոցով: Այստեղ հարկ է նշել նաեւ, որ թեհրանն ակտիվացրել է կապերը Իրաքի քրդերի հետ: 2009-ի դեկտեմբերին Իրանի նախագահի հրավերով թեհրան է ժամանել Յուսիսային Իրաքի քրդական կառավարության վարչապետ Բարհամ Սալեհը, որը բանակցություններ է վարել նախագահ Ահմադինեժադի, ԱԳՆ ղեկավար Մ.Մոթաքիի եւ նախկին նախագահ Ա.Ա. Չաշեմի-Ռաֆսանջանիի հետ: Կողմերը պայմանավորվել են խորացնել համագործակցությունը, իսկ Իրանը պարտավորվել է աջակցել քրդական իշխանություններին Յուսիսային Իրաքի զարգացման գործում:

### **Իրան – Աֆղանստան**

Աֆղանստանյան զարգացումներն Իրանի համար նույնպես բավական կարեւոր նշանակություն ունեն: 2009-ի երկրորդ կեսին Վաշինգտոնն ի ցույց դրեց աֆղանական հիմնախնդրի կարգավորման հարցում առաջին հերթին Պակիստանի հետ համագործակցելու մտադրությունը: ԱՄՆ պաշտպանության նախարարի նոյեմբերյան հայտարարության մեջ ասվում էր, որ Պակիստանն ԱՄՆ հիմնական դաշնակիցն է աֆղանական հարցի կարգավորման գործում, իսկ «Վաշինգտոնը, չնայած շրջանառվող լուրերին, հարգում է Պակիստանի անկախությունը եւ նպատակ չունի վերահսկում հաստատել նրա միջուկային զինանոցի վրա»:

Ամերիկա-պակիստանյան կապերի խորացումն անհանգստացրել է Իրանին, քանի որ Իսլամաբադի քաղաքականությունն Աֆղանստանում մշտապես ուղղված է եղել իրանական դիրքերի թուլացմանը, իսկ բուն Պակիստանում վերջին տարիներին տարվում է տեղի շիա համայնքի ակտիվ ճնշման եւ երկրից դուրսմղման քաղաքականություն: Կտրուկ ավելացել են ահաբեկչության դեպքերը տեղի շիաների նկատմամբ, որոնց թվաքանակը երկրում, ըստ որոշ տվյալների, վերջին 10 տարիներին 18 տոկոսից նվազել է 12-ի:

ԱՄՆ ներկայիս վարչակազմի ակտիվ համագործակցությունը Պակիստանի հետ անհանգստացնում է ոչ միայն Իրանին, այլեւ ամերիկյան պահպանողականներին: 2010-ին սենատոր եւ նախագահական վերջին ընտրությունների մասնակից Ջ.Մաքքեյնը հայտարարեց, որ ԱՄՆ-ը պարտավոր է «ավելի կոշտ քայլեր իրականացնել Պակիստանում տեղա-կայված թալիբների նկատմամբ, քանի որ պաշտոնական Իսլամաբադը նման քայլեր կամ չի կարող, կամ էլ չի ուզում կատարել»: Նշենք նաեւ, որ աֆղանական զարգացումներում Իրանի կարեւոր դերի եւ Թեհրանի հետ համագործակցության օգտին են հանդես գալիս նաեւ ամերիկյան գեներալները, այդ թվում տարածաշրջանում ամերիկյան ուժերի հրամանատար, գեներալ Դ.Փեթրեուսը, որը դեռ 2009-ի սկզբին ասում էր, որ աֆղանական հարցի լուծման գործում Իրանի հետ համագործակցության նշանակությունն անենակարեւորն է, եւ «զուցե անհրաժեշտ է մի կողմ թողնել այլ խնդիրներում ունեցած տարածայնությունները»: Այս կարծիքին են նաեւ Աֆղանստանում ռազմական ներկայություն ունեցող Գերմանիայի խորհրդարանի պատգամավորները, որոնք Քրիստոնեա-դեմոկրատական միության պատգամավոր Ա.Շոկենհոֆի ղեկավարութ-

յամբ պատրաստած զեկույցում նշում են, որ «աֆղանական հարցի լուծման համար կարելուագույնը Վաշինգտոնի եւ Թեհրանի համագործակցությունն է»:

Սակայն բուն Աֆղանստանի փուշտուն բնակչությունը եւ քաղաքական ուժերը դեմ են Իրանի մասնակցությանը երկրում ընթացող գործընթացներին, քանի որ դրանում տաջիկական եւ շիական ուժերի դիրքերի ամրապնդման հնարավորություն են տեսնում: Ինչպես նշում է հայտնի լրագրող եւ հետազոտող Բ.Ռուբինը, ով երկար ժամանակ աշխատել է Աֆղանստանում, տեղի հիմնական բնակչությունը տեսնում է, որ Իրանն Աֆղանստանում անկողմնակալ չէ: Դրա վառ օրինակն այն է, որ այսօր ամենաուներուր եւ ապահովված աֆղանները շիաներն են, «որոնք 2001-ից սկսած՝ հսկայական ֆինանսական աջակցություն են ստանում Իրանից»: Աֆղանստանում դիրքերի ամրապնդման նպատակով Իրանը Քաբուլին առաջարկել է ֆինանսավորել երկու երկրներն իրար կապող Չերաք-Խաթ երկաթգծի շինարարությունը, որի արժեքն է 500 մլն ԱՄՆ դոլար: Չնայած ծրագրի հեռանկարայնությանը, աֆղանական կենտրոնական իշխանությունները հրաժարվում են հաստատել շինարարության նախագիծը:

Վերջին շրջանում Իրանն սկսել է ակտիվորեն քննադատել ԱՄՆ աֆղանական քաղաքականությունը, ինչը, հավանաբար, պայմանավորված է նրանով, որ աֆղանական հարցում իրանա-ամերիկյան համագործակցության՝ դեռեւս 2001-ից գործող ձեւաչափը սկսել է լուրջ ճեղքեր տալ:

## **ԱՖՂԱՆՍՏԱՆ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ**

### **Գագիկ Տերտերյան**

2009թ. դեկտեմբերի 1-ին ամերիկյան Վեստ Փոյնթի ռազմական ակադեմիայում նախագահ Բարաք Օբամայի՝ Աֆղանստանի իրադրությանը նվիրված ծրագրային ելույթը զգալիորեն աշխուժացրել է Հարավային Ասիայի շուրջ ընթացող քաղաքական գործընթացները: Հիշենք, որ ամերիկյան նոր ռազմավարության հիմնական դրույթներն են.

1. տարածաշրջանում հասնել ճնշող ռազմական գերակայության եւ այդ դիրքերից բանակցել զինյալների «չափավոր» մասի հետ,

2. ձեւավորել «կոալիցիոն վարչախումբ» եւ 2011թ. հուլիսից սկսել սեփական ու դաշնակիցների զինուժի դուրսբերումը Աֆղանստանից:

Աֆղանական հիմնախնդրի շուրջ զարգացումներին հետեւող վերլուծաբանների մի զգալի մասը համարում է, որ ծրագրի ամենադժվար իրագործելի կետը ոչ այնքան ուժային գերակայության հասնելն է (սահմանափակ ժամանակային հատվածում դա իրատեսական է), որքան կենսունակ եւ, դրա հետ միասին, արեւմտյան քաղաքական կողմնորոշում ունեցող «կոալիցիոն վարչախմբի» ձեւավորումը: Նման թերահավատությունն իրական հիմքեր ունի, քանի որ Համիդ Քարզայը վերջին ընտրություններից հետո ի վիճակի չեղավ համախմբել անգամ իր աջակիցներին: Աֆղանական նոր կառավարությունից, տարբեր հիմնավորումներով, դուրս մնաց, այսպես կոչված, «Հյուսիսային ալյանսի» ներկայացուցիչների գերակշռող մասը, որոնց նախագահը պարտական է իր ընտրական հաջողությամբ (հաշվի առնելով այն, որ աֆղանական իրողություններում «ընտրությունները» բավական յուրահատուկ բնույթ են կրում): Իրավիճակին չտիրապետելու մասին են վկայում նաեւ վերջին երկու ամսվա գործընթացներն այդ երկրում:

**«Թալիբանի» պատասխանը.** Ամերիկյան նոր քաղաքականությունը յուրովի ընկալեցին աֆղան զինյալները: Ընդհանուր առմամբ ակտիվացնելով գործողությունները՝ նրանք դեկտեմբերին հարձակվեցին Քաբուլի ՄԱԿ առաքելության վրա, իսկ մի քանի օր անց նրանց գործակալը (որն, ինչպես պարզվեց, համագործակցում էր նաեւ ամերիկացիների



հետ) ներթափանցեց ԿՀՎ հենակայան եւ սպանեց ամերիկյան հետախուզության 7 աշխատակցի: Հունվարի 18-ին «Թալիբանի» 7 մահապարտները հանդուզն ահաբեկչական գործողություն կատարեցին Քաբուլի ամենաապահով համարվող Փուշտունստանի հրապարակում, որտեղ տեղակայված են մի քանի նախարարություններ, Կենտրոնական բանկը, առևտրական կենտրոնը, հյուրանոցային համալիրը եւ վերջապես նախագահի պալատի մուտքը. վերջինս ունի անվտանգության երեք օղակ, որոնցից երրորդը պահպանում են ամերիկյան զինվորները: Արդյունքում, ըստ տարբեր աղբյուրների, բազմաթիվ զոհեր եւ առնվազն 70 վիրավոր եղան, քաղաքում երկար ժամանակ քաոս եւ շփոթություն էր տիրում, իսկ մեդիա դաշտում հայտնվեցին ծավալուն նյութեր, որոնցում խիստ բացասական գնահատականներ էին տրվում եւ ամերիկացիների կազմակերպած անվտանգության համակարգին, եւ տեղական իշխանությունների կարողություններին:

Համաձայն մեկնաբանների, այս գործողություններով «Թալիբանը» ցույց տվեց, թե ով է «երկրի իրական տերը», իսկ Աֆղանստանում ՄԱԿ նախկին ներկայացուցիչ Թոմաս Ռեթֆորդ հայտարարեց, թե այդ քայլով «Թալիբանն» ապացուցեց, որ կարող է «հարձակում կատարել որտեղ ուզում է եւ երբ ուզում է»: Բնական է, որ այդ ահաբեկչությունները լրացուցիչ զգեցին Քարզայի վարչախմբի վարկանիշը եւ կասկածի տակ դրեցին երկիրն ինքնուրույն կառավարելու նրա կարողությունը: Որոշ վերլուծաբաններ հակվում են այն մտքին, որ այսօր Աֆղանստանում երկիրը համախմբող որեւէ ուժ չկա, եւ կանխատեսում են երկրի մասնատումը: Դիտարկվում են նաեւ ավելի մեղմ տարբերակներ. օրինակ, Սայմոն Կոշուտը (Բեռլինի Ազատ համալսարան) գտնում է, որ անհրաժեշտ է Աֆղանստանն ապակենտրոնացնել վարչական տեսակետից եւ ձեւավորել շվեյցարական կանտոնների տիպի ինքնավար շրջաններից բաղկացած կոնֆեդերացիա:

Բոլոր պարագաներում, իրադրության բարդացումը լրացուցիչ ակտուալացրեց աֆղանական հիմնախնդիրը, որի խաղաղ կարգավորմանն էր նվիրված Լոնդոնի միջազգային կոնֆերանսը: Նշենք նաեւ, որ խնդրին նվիրված կոնֆերանս Լոնդոնում տեղի էր ունեցել նաեւ 2006թ.:

**Խաղաղարար ծրագրի «անգլիական հետքը»** ՄԱԿ գլխավոր քարտուղար Պան Գի Մունը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Գորդոն Բրաունը, Աֆղանստանի նախագահ Համիդ Քարզայը եւ շուրջ 70 երկրների արտաքին գերատեսչությունների ղեկավարներ (որոնց թվում էր Ք.Բլինթոնը եւ Ս.Լավրովը) ս.թ. հունվարի 28-ին հավաքվել էին Մեծ

Բրիտանիայի ԱԳՆ «Լանքասթեր Չաուզ» ընդունելությունների տանը՝ քննարկելու աֆղանական հիմնախնդիրը: Չնայած կազմակերպիչների բազմաթիվ հորդորներին, հավաքին բացակայում էր Իրանի պատվիրակությունը: Այդ երկրի՝ նախօրեին կատարած կոշտ հայտարարությունը լի էր դիվանագիտական պրակտիկայում չընդունված արտահայտություններով. «...հավաքն անօգուտ է... եւ չի նպաստելու Աֆղանստանի հիմնախնդիրների լուծմանը... հակառակը, այն նպատակ ունի մեծացնելու ռազմական ներկայությունն այդ երկրում եւ չի անդրադառնում հիմնախնդրի իրական արմատներին»: Ըստ պաշտոնական թեհրանի, որն իրական ազդեցություն ունի հարեւան Աֆղանստանում ընթացող զարգացումների վրա, խնդրի լուծումը հնարավոր է միմիայն աֆղանական տարբեր ուժերի եւ տարածաշրջանային երկրների համագործակցության պարագայում:

Վերադառնալով լոնդոնյան քննարկումներին՝ նկատենք, որ դրանք, ինչպես եւ սպասվում էր, ընթանում էին նախագահ Օբամայի նոր, «խաղաղասիրական» քաղաքականության դիրքերից: Կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ այդ «նոր» ռազմավարությունը, ամենայն հավանականությամբ, մշակվել էր նաեւ բրիտանական գործընկերների անմիջական մասնակցությամբ, եւ դա պայմանավորված է ոչ միայն Չարավային Ասիայում անգլիացիների ունեցած դարավոր փորձով: Վերջին տարիներին մամուլում հանդիպում էին նյութեր, որոնցում խոսվում էր բրիտանական գաղտնի ծառայության (MI-6) եւ թալիբների շփումների ու բանակցությունների մասին: Չպետք է բացառել, որ այդ նյութերը հայտնվում էին մեդիա դաշտում նույն MI-6-ի «փոխանցումով»: Ի լրումն, Մեծ Բրիտանիայի պաշտոնատարներն Աֆղանստանին առնչվող հարցերում մշտապես ավելի մեղմ եւ զգույշ էին արտահայտվում, քան նրանց ամերիկյան դաշնակիցները: Այսինքն՝ նման է այն բանին, որ բրիտանացիներն արդեն վաղուց համոզված էին, որ զուտ ռազմական միջոցները հեռանկար չունեն, եւ իրենց գործողություններով ու քաղաքական դիրքորոշումներով անխուսափելի «խաղաղ ռազմավարությանն» անցնելու հող էին նախապատրաստում:

Լոնդոնի կոնֆերանսում, մասնավորապես, համաձայնեցվեց Աֆղանստանում անվտանգության ապահովումը տեղական իրավապահ մարմիններին հանձնելու ժամանակացույցը. ենթադրվում է գործընթացը սկսել այս տարի, իսկ 2011-ին երկրի որոշ շրջաններ պետք է վերահսկվեն գլխավորապես տեղական ուժերի կողմից: Նշենք, որ այդ ուժերը լուրջ թվաքանակ ունեն. ազգային բանակը՝ մոտ 172 հազար զինծառայող, իսկ ոստիկանական ուժերը՝ 134 հազար:

Ընդունվեց նաև Համիդ Քարզայի պլանը (անշուշտ, նախապես համաձայնեցված)՝ խաղաղություն հաստատելու գործընթացում թալիբներից ներգրավելու վերաբերյալ, եթե վերջիններս խզեն կապերը «Ալ-Քաիդայի» եւ այլ ահաբեկչական կազմակերպությունների հետ: Քարզայը նաև առաջարկեց, որպեսզի իշխանությունների եւ զինյալների միջև միջնորդական առաքելությունն ստանձնի Սաուդյան Արաբիայի Արալլա թագավորը. ինչպես հայտնի է, սաուդները «Թալիբանի» վրա ազդեցության որոշակի լծակների են տիրապետում: Սակայն, ի պատասխան, թագավորության ներկայացուցիչը նախապայման դրեց. նրանք միջնորդական գործունեությամբ կգրառվեն միայն այն պարագայում, եթե թալիբները «հանձնեն» Բեն Լադենին, ինչը ստեղծված իրադրությունում իրատեսական չի թվում:

Կոնֆերանսում որոշվեց նաև, որ խաղաղության գործընթացի իրականացումը հնարավոր է միայն տնտեսական լուրջ ներդրումների դեպքում: Արդյունքում՝ ոչ միայն «դուրս գրվեց» Աֆղանստանի \$1,6 մլրդ պարտքը, այլև այդ երկիրը \$870 մլն մարդասիրական օգնություն ստանալու հայտ ներկայացրեց: Ստեղծվեց նաև «խաղաղության եւ վերահիմնագրման հիմնադրամ», որտեղ կուտակվող գումարները պետք է ուղղվեն թալիբներին «խաղաղ կյանքի» կոչելու ծրագրերին: Ըստ տեղեկատվական դաշտում հայտնված հաղորդագրությունների, այդ հիմնադրամում պետք է կենտրոնացվի շուրջ \$1 մլրդ, սակայն մասնակից երկրներն առայժմ \$140 մլն են հավաքել:

Հայտնի է, որ նյութական գործոնն աֆղանական ռազմաքաղաքական զարգացումներում խիստ կարեւոր, հաճախ նաև որոշիչ նշանակություն ունի: Խնդրի առիթով, թերեւս, տեղին է մտաբերել տարածաշրջանի փորձառու գիտականից մեկի խոսքերը, թե *«աֆղան զինյալներին հնարավոր չէ գնել, նրանց հնարավոր է միայն վերագնել»*: Այսպիսով, Լոնդոնում ստեղծված հիմնադրամի միջոցներով զանգվածային «վերագնման» փորձ է կատարվելու, ինչը, իր հերթին, ակտուալացնում է այն խնդիրը, թե ով է լինելու հաջորդ «զնորդն» Աֆղանստանում: Այդ համատեքստում, մասնավորապես, ուշադրության արժանի է այն փաստը, որ հավաքված \$140 մլն գումարի շուրջ կեսը (50 մլն եվրո) ներդրեց Գերմանիան:

**Գերմանական աշխարհաքաղաքական «վարոտախտը»** Հայտնի է, որ ռազմական կամպանիայի սկզբում ԱՄՆ-ը տարբեր պատրվակներով ձգտում էր «աֆղանական գործերում» մեծ դերակատարում չհատկացնել մայրցամաքային Եվրոպայի իր դաշնակիցներին եւ գլխավորապես

հենվում էր «վստահելի անգլիախոս երկրների» վրա (Մեծ Բրիտանիա, Կանադա, Ավստրալիա եւ Նոր Զելանդիա): Վերլուծաբանները նման միտումը մեկնաբանում էին այն ոգով, թե անգլոսաքսերն այդպիսով ցանկանում են մենատիրել «աշխարհաքաղաքական» այնպիսի խոշոր ավարի, ինչպիսին այն ժամանակ ընկալվում էր Աֆղանստանը: Որոշ ժամանակ անց առաջին հաղթական փուլի ոգեւորությունն անհետացավ, եւ ձեւավորվող անբարենպաստ իրադրությունում ամերիկացիներն իրենք սկսեցին հրահրել ՆԱՏՕ եւ այլ երկրների գործընկերներին ավելի գործուն մասնակցություն ցուցաբերել ռազմաքաղաքական գործընթացներում: Սակայն վերջին 9 տարում իրադրությունն էապես փոխվել է, եւ ոչ միայն Յարավային Ասիայում. Միացյալ Նահանգներն աֆղանական պատերազմը սկսեց միաբեւեռ համակարգի պայմաններում, սակայն ձգտում է այն ավարտել արդեն բազմաբեւեռ աշխարհում, որում այլ քաղաքական տրամաբանություն է գործում:

Մասնավորապես, այդ նոր, բազմաբեւեռ աշխարհում նկատվում են շահերի հակասություններ ԱՄՆ-ի եւ եվրակենտրոն երկրների միջեւ, որոնց գլխավոր ներկայացուցիչներն են Գերմանիան եւ Ֆրանսիան: Այդ երկրները, օրինակ, չմասնակցեցին իրաքյան պատերազմին, որոշակիորեն խոչընդոտում են Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին, Թուրքիայի՝ ԵՄ անդամագրմանը, զգալիորեն սկսել են տարբերվել եվրոպացիների եւ ամերիկացիների մոտեցումները նաեւ գլոբալ ֆինանսատնտեսական համակարգի զարգացման հարցերում: Նկատենք նաեւ, որ «ինքնուրույն քաղաքականություն վարելու» պահանջն առավել մեծ է գերմանացիների մոտ: Եթե երկրորդ աշխարհամարտում հաղթած Ֆրանսիան պահպանել է ազդեցության ոլորտները (օրինակ՝ Աֆրիկայում) եւ դարձել «միջուկային ակունքի անդամ» տերություն, ապա նույնը չի կարելի ասել Գերմանիայի մասին: Լինելով աշխարհի ամենամեծ տնտեսություններից մեկը, ունենալով մարտունակ զինված ուժեր եւ տեխնոլոգիական-քաղաքակրթական զգալի ներուժ՝ այդ պետությունն առայժմ չունի իր հնարավորություններին համապատասխան ռազմաքաղաքական ազդեցություն գլոբալ հարթությունում: Ստեղծված իրավիճակը փոխելու նպատակով Գերմանիան, ի հակակշիռ ԱՄՆ-ի, հետեւողականորեն ամրապնդում է հարաբերությունները Ռուսաստանի հետ՝ այդպիսով հարազատ մնալով սեփական աշխարհաքաղաքական դպրոցի հիմնադրույթներին, որոնց խախտումը խիստ ծանր նստեց այդ երկրի վրա Առաջին եւ Երկրորդ աշխարհամարտերում: Այդ ամենի առումով չպետք է բացառել, որ աշխարհաքաղաքական էպիկենտրոն հանդիսացող Աֆղանստանում «մասնաբաժին» ձեռք բերելը գերմանացիների կողմից դիտարկվում է

որպես «մեծ քաղաքականություն» վերադառնալու լրացուցիչ հնարավորություն:

Աֆղանական հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը նվիրված հաջորդ կոնֆերանսը կկայանա այս տարի Քաբուլում: Սպասվում է, որ տեղի իշխանությունները կներկայացնեն աֆղանական ժողովրդի համար կոնկրետ պլաններ՝ հիմնված «ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության» սկզբունքների վրա: Ինչպիսին կլինի իրավիճակն այդ երկրում նոր հավաքի պահին, դժվար է կանխատեսել: Միեւնույն ժամանակ ակնհայտ է, որ առաջիկա տարիներին ամերիկյան ռազմական ներկայության կրճատումը նկատելիորեն փոխելու է Եվրասիայի զգալի հատվածում տիրող իրավիճակը: Անխուսափելիորեն գոյացող այդ բացը փորձելու են «լցնել» աշխարհաքաղաքական այլ դերակատարներ եւ առաջին հերթին տարածաշրջանային երկրները: Նկատենք, որ ինչ-որ չափով այդ միտումներով են պայմանավորված նաեւ թուրքական «ճեռոսմանյան» քաղաքականությունը եւ այդ միտումներին հակակշիռներ ստեղծելու այլ տերությունների գործողությունները:

## ԱՄՆ–ՉԻՆԱՍՏԱՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### *Ֆեոդոր Լուկյանով*

Թայվանին 6,4 մլրդ դոլարի զենք վաճառելու ԱՄՆ որոշումը հարուցեց Չինաստանի կտրուկ անդրադարձը, որը սառեցրեց երկկողմանի ռազմական շփումները՝ խոստանալով ամերիկյան ընկերությունների հանդեպ պատժամիջոցներ եւ այլ «անցանկալի հետեւանքներ»:

Թայվանի պատճառով հակամարտությունը սրացման միակ նախանշանը չէ: ԱՄՆ Պետդեպարտամենտն արդեն մի քանի անգամ արտահայտվեց Google ընկերության սատարման օգտին՝ նրա խնդիրներն անմիջականորեն կապելով չինական շուկայում կառավարության գործողությունների հետ: Իսկ Յիլարի Քլինթոնը Չինաստանին խոստացավ «միջազգային մեկուսացում», եթե նա հակազդի Թեիրանի դեմ պատժամիջոցներին:

Բարաք Օբամայի վարչակազմի հարաբերությունները Չինաստանի հետ ի սկզբանե չհաջողվեցին: Ի տարբերություն մնացյալ աշխարհի, որը չկարողացավ սպասել Ջորջ Բուշի պաշտոնաթողությանը, դեմոկրատների իշխանության վերադարձը ոգեւորություն չառաջացրեց Պեկինում: Չինացիների համար ԱՄՆ նախորդ նախագահի եւ նրա թիմի հետ ամեն ինչ կարծես վատ չէր դասավորվել: Ութ տարվա ընթացքում Բուշն անցավ անբարյացակամությունից ու կոնֆլիկտներից (օրինակ՝ Հայնանում լրտես ինքնաթիռի հարկադրական վայրէջքի պատճառով) մինչեւ Միացյալ Նահանգների գրեթե ամենաչինամետ ղեկավարի ուղի:

Վաշինգտոնն ու Պեկինը տնտեսական փոխկախվածությունից օգուտ քաղեցին: Հատկանշական է, որ Բուշի վարչակազմում չինական ուղղության առանցքային դեմքը եղավ ոչ թե պետքարտուղարը կամ պաշտպանության նախարարը, այլ ֆինանսների նախարար Հենրի Փոլսոնը: Պա արտացոլում էր Վաշինգտոնի կողմից հարաբերությունների էության ընկալումը: Իսկ քաղաքական ոլորտում գործում էր ոչ հրապարակավ փոխզիջում: Չինաստանը հակամերիկյան ուղեգիծ չէր վարում եւ, առհասարակ, միջազգային ասպարեզում ցուցադրում էր զսպվածություն: Իսկ ԱՄՆ-ը զգուշությամբ շրջանցում էր Պեկինի «ցավոտ կոշտուկները» եւ չէր վրդովեցնում սեփական աշխարհայացքի պարտադրմամբ: Միաժամանակ, փոխադարձ կասկածամտությունը, ինչպես նաեւ ապագայում գլոբալ մրցակցության սցենարները չվերացան, սակայն հանուն տնտե-

սական կայունության՝ դրանք մղվեցին երկրորդ պլան: Հանրապետական վարչակազմը տնտեսության «ռազմավարական ճյուղերը» չինական ներդրումային էքսպանսիայից պաշտպանելու գաղափարներին հատուկ ընթացք չտվեց, թեև Չինաստանի վերելքին զուգընթաց նման տրամադրությունները սաստկանում էին:

Դեմոկրատների գալուստն ավելացրեց հովանավորչությունն ամերիկյան քաղաքականությունում: Օրինակ՝ վերջին ամիսներին վարչակազմը չինական ավտոդողերի, պողպատե խողովակների եւ էլեկտրատաքացուցիչով վերմակների դեմ պաշտպանական միջոցներ ձեռնարկեց: Ֆինանսների նոր նախարար Թիմոթի Չեյթները կարողացավ մինչև իր պաշտոնական պարտականություններին անցնելը գծովել Պեկինի հետ՝ մեղադրելով նրան յուանի փոխարժեքի մանիպուլացման մեջ: Պետքարտուղար Յիլարի Բլինթոնի փետրվարյան այցը ՉԺՀ հագեցած էր հաշտարար նոտաներով՝ ընդհուպ մինչև հրապարակավ հայտարարությունն այն մասին, թե մարդու իրավունքների ու ժողովրդավարության թեման առաջնային չի հանդիսանում: Սակայն պեկինյան ղեկավարությունն այն գնահատեց միանշանակ. գտնվելով տնտեսական ծանր կացության մեջ՝ ամերիկյան իշխանությունները փորձում են ՉԺՀ-ի վրա դնել բեռի մի մասը, նախապես իրենց ապահովելով ԱՄՆ վիթխարի դեֆիցիտի ֆինանսավորման երաշխիքներով:

Անշուշտ, Միացյալ Նահանգների նկատմամբ Չինաստանի վերաբերմունքի փոփոխությունը պայմանավորված է ոչ այնքան վարչակազմի փոփոխությամբ, որքան տնտեսական ճգնաժամով, որը ստիպեց Պեկինին նորովի նայել Ամերիկայի հետ գործընկերությանը: Դրսեւորվեց զարգացման խոցելիությունը՝ կողմնորոշված բացառապես արտահանման վրա, եւ այժմ չինացիները քննարկում են, թե ինչպես նվազեցնել կախվածությունն արտաքին գործոններից՝ ընդլայնելով ներքին սպառումը: Բացի այդ, Չինաստանում չեն թաքցնում Վաշինգտոնի հանդեպ դժգոհություններն ու վրդովմունքը, ով, իր վրա վերցնելով գլոբալ կառավարման գործառույթներ, չկարողացավ դրանք իրագործել, իսկ այժմ փորձում է ուրիշներին ներգրավել սեփական խնդիրների լուծմանը: Ընդհանուր առմամբ, Չինաստանը հակված է այն մտքին, թե Ամերիկան անցել է ազդեցության բարձրակետը, աշխարհն աստիճանաբար հեռանում է ամերիկյան գերիշխանությունից, իսկ դա նշանակում է, որ ԱՄՆ-ի հանդեպ արժե ավելի վստահ գտնվել, քան նախկինում:

Սպիտակ տանը մեկ տարի պաշտոնավարելու ընթացքում Օբաման այդպես էլ չկարողացավ ձեւակերպել, թե ինչպես իրեն պահել Չինաստանի հետ: Երկու երկրների միջեւ ռազմավարական երկխոսության

մակարդակի բարձրացման որոշումը՝ ընդունված դեմոկրատական վարչակազմի օրոք, հանդիսանում է հարաբերությունների կարելորության ընդունում, բայց չի նշանակում իրական ռազմավարության առկայություն: Երկու սովորական մոդելները՝ *զսպում* եւ *ներգրավում*, չեն համընկնում: Առաջինը՝ որովհետեւ հասկանալի չէ, թե ինչպես զսպել երկրին, որի հետ Ամերիկան գտնվում է ֆինանսատնտեսական համակեցության վիճակում: Երկրորդ՝ որովհետեւ Պեկինը ոչ մի տեղ ներգրավվել չի պատրաստվում, այլ նպատակաուղղված ամրապնդում է դիրքերը ոչ «ընդդեմ», սակայն «ի շրջանցումն» ԱՄՆ-ի:

Դատելով ամենից՝ Օբաման, որը զուրկ չէ քաղաքական զգացողությունից, 2009թ. նոյեմբերին Չինաստան իր այցի ժամանակ ըմբռնեց իրավիճակի բարդությունը: Ուղեւորությունը ո՛չ հաջողվեց, ո՛չ էլ ձախողվեց, այն պարզապես ոչ ոքի ավարտվեց: Դեկտեմբերին, կլիմայի վերաբերյալ կոպենհագենյան կոնֆերանսում, Բարաք Օբամային չհաջողվեց Պեկինից որեւէ զիջում կորզել: Ավելին, ամերիկյան առաջատարության իմիջը պահպանելու համար նրան հարկ եղավ ուղղակիորեն «նետվել» Չինաստանի, Չնդկաստանի, Բրազիլիայի ու Հարավաֆրիկյան Հանրապետության ղեկավարների հետ բանակցությունների, որտեղ համաձայնեցվեցին եզրափակիչ հռչակագրի սկզբունքները:

Նախորդած վարչակազմերը (թե՛ Քլինթոնի, թե՛ Բուշի) ելնում էին նրանից, որ ՉԺՀ-ն, շուկայական տնտեսության զարգացմանը զուգընթաց, կմերձենա Արեւմուտքին, քանզի տնտեսական առաջընթացը խթանում է քաղաքական համակարգի ազատականացմանը: Դա տեղի չի ունենում, գոնե՝ առայժմ, սակայն չինական հզորության եւ ինքնավստահության աճը թույլ չի տալիս սպասել իրադարձությունների հետագա զարգացմանը: Ինչպես վերջերս նկատել է մեկնաբաններից մեկը, եթե Վաշինգտոնը վերանայի Չինաստանի հեռանկարի վերաբերյալ նախկին տեսակետը, հարկ կլինի Պեկինին ընկալել բացառապես իբրեւ հզորացող մրցակցի՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Ինչպես էլ որ լինի, ամերիկյան ղեկավարությանն անհրաժեշտ է, ցուցադրելով կամք եւ գործունակություն, հաղթահարել «թուլացող գերտերության» կերպարը, որը, դատելով ամենից, այժմ ձեւավորվել է Պեկինում:

Տիրապետո՞ւմ է, արդյոք, Միացյալ Նահանգները ՉԺՀ-ի վրա ազդելու արդյունավետ լծակների: Չինաստանի «միջազգային մեկուսացման» վերաբերյալ Քլինթոնի արտահայտությունը հնարավոր չէ լուրջ ընդունել. Վաշինգտոնն ի վիճակի չէ կազմակերպել Պեկինի մեկուսացումը: Հարցը միայն Երրորդ աշխարհի դիրքորոշումը չէ: Հետաքրքրական է վերջերս Իսպանիայի (որը նախագահում է Եվրամիությունում) արած հայտա-



րարությունը՝ Չինաստանին եվրոպական գենքի մատակարարման արգելքի հանձնար հասնելու մտադրության մասին, որը մտցվել էր 1989թ. ուսանողական հուզումների ճնշումից հետո: Եվրոպացիներն արդեն մի քանի անգամ բարձրացրել են այդ թեման, բայց ԱՄՆ ճնշման տակ հրաժարվել են դրանից: Հաշվի առնելով ամերիկա-եվրոպական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխությունները՝ կարելի է ենթադրել, որ այս անգամ Եվրամիության փորձը կլինի առավել հաստատական:

Ամերիկյան կողմը յուրանի առիթով կարող է շատ ավելի կոշտ կերպով «վրա տալ» Պեկինին, քան այժմ, եւ այստեղ ԱՄՆ-ն իրավունք ունի ապավինել մյուսների համակրանքին. չինական արժույթի իջեցված փոխարժեքն անհանգստացնում է ողջ աշխարհի արտադրողներին: Ի դեպ, բանավեճը տարվում է անցյալ դարի վերջից, եւ այդ ամբողջ ժամանակ Չինաստանը գնացել է սոսկ չնչին զիջումների: Հնարավոր են Միացյալ Նահանգների շուկաներ մուտքի սահմանափակումներ, սակայն դա երկսայրի թեմա է. Չինաստանը պատասխանելու բան ունի՝ հաշվի առնելով ամերիկյան կորպորացիաների հսկայական շահերն այդ երկրում: Օրինակ՝ Թայվանին գենքի մատակարարմանը մասնակցող ընկերությունների հանդեպ պատժամիջոցների սպառնալիքն ընդունվեց լրջորեն. չէ՞ որ մատակարարների մեջ են այնպիսի հսկաներ, ինչպիսիք են Boeing-ը եւ United Technologies-ը, որոնց համար կարելու է չինական շուկան: Միաժամանակ, Չինաստանը դեռեւս հանդիսանում է ամերիկյան ֆինանսական պարտավորությունների խոշորագույն պահանջատերը:

Սկզբունքորեն, ամերիկա-չինական սրացումներ տեղի են ունենում պարբերաբար. դրանցից է սկսել նաեւ Բուշի վարչակազմը, ինչը հետագայում չխանգարեց Պեկինի հետ ստեղծել կառուցողական շփումներ: Սակայն ներկայիս իրավիճակը սկզբունքորեն տարբերվում է նրանից, որն առկա էր տասնամյակի սկզբին: Այն ժամանակ խոսքը երկկողմանի հարաբերությունների մասին էր, այժմ գլոբալ խաղ է ընթանում: Եթե Միացյալ Նահանգներին հաջողվի ստիպել Չինաստանին գնալ ինքնասահմանափակման, որը, Դեն Սյաոպինի պատվիրանի համաձայն, երկար տարիներ հատուկ էր չինական քաղաքականությանը, դա լրջորեն կամրապնդի ԱՄՆ միջազգային վարկանիշն առհասարակ: Բայց եթե Վաշինգտոնին հարկ լինի նահանջել, հնարավոր կլինի խոսել Չինաստանի որակական հզորացման մասին, ինչն անխուսափելիորեն կանդորադառնա բազում գլոբալ թեմաների վրա:

«Газета», 01.02.2010

**ՄԻԱՑՅԱԼ ՆԱՅԱՆՔՆԵՐԸ**  
**ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**  
*Արաբս Փաշայան*

2008-ին միջազգային հանրությունը, այդ թվում՝ արաբական իսլամական աշխարհը, մեծ հետաքրքրություն դրսևորեց ԱՄՆ նախագահական ընտրություններին առնչվող գործընթացների նկատմամբ: Հատկապես դրականորեն ընկալվեց դեմոկրատական կուսակցության նախագահի թեկնածու Բարաք Օբամայի նախընտրական քարոզչությունը: Պատճառը թերևս այն էր, որ Օբաման խոստացել էր շտկել ԱՄՆ իմիջն արտաքին աշխարհում (ինչը լուրջ վնասներ էր կրել Ջորջ Բուշ կրտսերի նախագահության շրջանում), հարթել նախորդ վարչակարգի օրոք ԱՄՆ միջին-արևելյան, մասնավորապես՝ արաբական քաղաքականության մեջ թույլ տրված սխալները, բարելավել խրթին հարաբերություններն իսլամական աշխարհի հետ: Արաբական հասարակություններում ձեւավորված որոշակի համակրանքն Օբամայի նկատմամբ, ըստ ամենայնի, կապված էր նաեւ այն փաստի հետ, որ վերջինս, թեւ քրիստոնյա, հոր կողմից իսլամական արմատներ ունի, իսկ մանկությունն անց է կացրել իսլամական ամենամեծ բնակչություն ունեցող երկրում՝ Ինդոնեզիայում:

Հարկ է նշել, որ արաբական հասարակություններում հակամներիկյան տրամադրություններ, ընդհանուր առմամբ, դրսևորվել են թե՛ սառը պատերազմի տարիներին, թե՛ դրան հաջորդած շրջանում, ինչը հիմնականում պայմանավորված էր արաբ-իսրայելական հակամարտության հարցում Իսրայելին ԱՄՆ աջակցության հանգամանքով: Սակայն 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո ԱՄՆ-ի կողմից իսլամի եւ իսլամական աշխարհի դեմ տարվող շարունակական քարոզչությունը, ռազմական գործողություններն Աֆղանստանում, Իրաքի օկուպացիան, աջակցությունը Իսրայելի ռազմական գործողություններին (2006-ին Լիբանանում, ապա՝ 2008-ին Ղազախում), ինչպես նաեւ՝ Սիրիայի ու Իրանի նկատմամբ իրականացվող կոշտ քաղաքականությունը, նպաստեցին հակամներիկյան տրամադրությունների աննախադեպ աճին:

2008-ին, ԱՄՆ-ում նախագահական ընտրարշավի ընթացքում, հասարակական կարծիքի ուսումնասիրության Zogby International կազմակերպության կողմից արաբական վեց երկրներում (Եգիպտոսում, Հորդանանում, Լիբանանում, Մարոկոյում, Սաուդյան Արաբիայում եւ Արաբական

Միացյալ Էմիրություններում) անցկացված հարցախույզի տվյալներն ի ցույց դրեցին ԱՄՆ միջինարեւելյան քաղաքականության նկատմամբ արաբական հասարակական կարծիքի առանձնահատկությունները:

Հարցվածների ծանրակշիռ մասը նշել է, որ չի վստահում եւ բացասական կարծիք ունի ԱՄՆ-ի նկատմամբ, որի մասին պատկերացումները ձեւավորել են առավելապես նրա վարած քաղաքականության արդյունքում, քան այդ երկրի «արժեքները» հաշվի առնելով: Կեսից ավելին նշել են, թե չեն հավատում, որ տարածաշրջանում ժողովրդավարության հաստատումը ԱՄՆ իրական նպատակն է՝ ընդգծելով, որ Վաշինգտոնն այն սխալ ձեւով է իրականացնում: Հարցվածների մեծ մասը տարածաշրջանի գլխավոր խնդիրներից մեկը համարել է Պաղեստինի հարցը, սակայն հոռետես է գտնվել Պաղեստին պետության տեսլականի հարցում: Մեծ մասը համոզված է եղել, որ Թեիրանն իրավունք ունի զարգացնել միջուկային ծրագիր, չնայած արաբական վարչակարգերը, հիմնականում, զգուշանում են Իրանից: Բացի այդ, առանձնապես կարեւորվել են քաղաքական այն գործիչները, ովքեր դիմակայում են Իսրայելին եւ ԱՄՆ-ին: Ամենախարիզմատիկ համարվել է «Հիզբալլահի» առաջնորդ Հասան Նասրալլահը, նրանից հետո՝ Սիրիայի նախագահ Բաշար Ալ-Ասադը: Հարցվածների մեծ մասը նշել է, որ Միջին Արեւելքում խաղաղության հասնելու համար նախագահի թեկնածուներից ամենամեծ հնարավորությունն ունի Օբաման, սակայն թերահավատ է գտնվել ԱՄՆ եւ արաբական աշխարհի հարաբերությունների հետագա բարելավման հարցում՝ անկախ այն հանգամանքից, թե ով կընտրվի:

Բարաք Օբամայի՝ ԱՄՆ նախագահ դառնալուց շուրջ 100 օր անց, 2009թ. ապրիլ–մայիս ամիսներին, արաբական նշված վեց երկրներում Zogby International-ը նմանօրինակ հերթական հարցախույզն անցկացրեց, ինչն ի ցույց դրեց ԱՄՆ նոր վարչակարգի նկատմամբ տրամադրությունների էվոլյուցիան: Հարցվածների 45 տոկոսը նշել էր, որ Օբամայի հարցում դրական է տրամադրված: Մասնակիցների մոտ կեսն ասել էր, որ սպասելիքներ ունի ԱՄՆ միջինարեւելյան քաղաքականությունից: Տարածաշրջանի ամենակարեւոր հարցերը հարցախույզի մասնակիցները համարել էին Իրաքից ԱՄՆ զորքերի դուրսբերումը (42 տոկոս), արաբ-իսրայելական հակամարտության կարգավորումը (26 տոկոս), ապա՝ Օբամայի դիրքորոշումն արաբների եւ իսլամական աշխարհի նկատմամբ (16 տոկոս): Սակայն, ինչպես նախորդ հարցախույզի ժամանակ, հարցվածների գերակշռող մասը շարունակել է սպառնալիք տեսնել Իսրայելից եւ ԱՄՆ-ից: Մերիլենդի համալսարանի պրոֆեսոր Շիբլի Թելիամին, վերլուծելով Օբամայի նկատմամբ արաբական աշխարհում ձեւավորվող

տրամադրությունները, անհրաժեշտ է համարել ուշադրություն դարձնել մի փաստի, այն, որ արաբները միայն նշում են, թե սպասելիքներ ունեն Օբամայից, սակայն ամենեւին «սիրահարված» չեն նրան:

2009թ. ապրիլին Օբաման ելույթ ունեցավ Անկարայում եւ նշեց, որ ԱՄՆ-ը պատերազմի մեջ չէ եւ չի լինի իսլամի հետ, իսկ հունիսին սկսվեց նախագահի միջինարեւելյան շրջագայությունը: ԱՄՆ նորընտիր նախագահն այցելեց իսլամի հայրենիք՝ Սաուդյան Արաբիա, իսկ հունիսի 4-ին հանդես եկավ իսլամական աշխարհի առաջ՝ ընտրելով շուրջ հարյուր տարվա պատմություն ունեցող Կահիրեի համալսարանը՝ որոշակիորեն նոր շեշտադրումներ անելով իսլամին եւ իսլամական աշխարհին առնչվող մի շարք հարցերում:

ԱՄՆ նախագահն առաջին հերթին կարեւորեց Արեւմուտքի եւ իսլամական աշխարհի միջեւ առկա կարծրատիպերը վերացնելու անհրաժեշտությունը՝ կոչ անելով վերջ դնել ԱՄՆ-ի եւ մուսուլմանական աշխարհի միջեւ կասկածի եւ անհամաձայնության մթնոլորտին, ինչպես նաեւ նոր էջ բացել այդ հարաբերություններում: Ընդգծվեց երկկողմ շփումներում առկա երկարատեւ անվստահությունը շարունակական ջանքերի, փոխադարձ հարգանքի եւ փոխշահավետ համագործակցության միջոցով հաղթահարելու անհրաժեշտությունը: Մի քանի մեջբերումներ անելով Ղուրանից եւ ի ցույց դնելով իսլամի խաղաղասիրական բնույթը, նաեւ վկայակոչելով Ավետարանն ու Թորան՝ Օբաման բոլոր հավատքների հետեւորդներին կոչ արեց ապրել խաղաղության մեջ:

Ճիշտ է, ԱՄՆ նորընտիր նախագահի ելույթի նկատմամբ արաբական աշխարհի արձագանքն, ընդհանուր առմամբ, դրական էր, սակայն՝ ոչ միանշանակ: Արաբական լսարանը ցանկանում է, որպեսզի ԱՄՆ նոր վարչակարգը շոշափելի արդյունքներ արձանագրի տարածաշրջանի համար հանգուցային նշանակություն ունեցող խնդիրների կարգավորման հարցում: Մինչդեռ միջինարեւելյան խնդիրներում Օբաման դեռեւս շոշափելի արդյունքներ չի արձանագրել:

Չատկանշական է, որ առաջին պաշտոնական հեռախոսազրույցն Օբաման ունեցել է Պաղեստինի Ինքնավարության նախագահ Մահմուդ Աբասի հետ՝ համարելով նրան Պաղեստինի իր միակ գործընկերն ու դաշնակիցը, այնինչ շատերն ակնկալում էին, թե ԱՄՆ-ը ի վերջո կվերանայի «Չամասի» նկատմամբ դիրքորոշումը, որն իրական իշխանություն ունի ինքնավարության Ղազայի շրջանում եւ զգալի հեղինակություն ողջ արաբական աշխարհում: Նույնը «Յիզբալլահի» պարագայում էր: 2009-ի լիբանանյան խորհրդարանական ընտրություններից առաջ այցելելով Բեյրութ՝ ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենը հայտարարեց, որ ամերիկյան

հետագա ֆինանսական օգնությունն այդ երկրին կախված կլինի խորհրդարանական ընտրությունների արդյունքներից: Դրանք չեղյալ կհայտարարվեն, եթե հաղթանակ տանի այն դաշինքը, որ ղեկավարում է «Հիզբալլահը», որն այսօր Լիբանանի ամենաազդեցիկ քաղաքական շարժումներից մեկն է:

Ներկայումս տեղաշարժ չկա արաբ-իսրայելական բանակցությունների վերսկսման գործում: ԱՄՆ-ին չի հաջողվել համոզել Իսրայելին՝ դադարեցնել նոր բնակավայրերի շինարարությունը, ինչը պաղեստինյան կողմը համարում է անհրաժեշտ նախապայման բանակցությունները վերսկսելու համար: Էական փոփոխություն չի կրել Սիրիայի նկատմամբ ԱՄՆ դիրքորոշումը, բացառությամբ՝ Սիրիայի իշխանությունների հետ ԱՄՆ բանագնաց Ջորջ Միքելի վարած բանացությունների: Առայժմ ԱՄՆ-ին չի հաջողվել լիովին կայունացնել իրավիճակը Իրաքում, թեև նշվել է այդ երկրից ամերիկյան ռազմուժը դուրս բերելու ժամանակացույցը:

Հատկանշական է, որ Օբամայի վարչակարգն աստիճանաբար փորձում է հրաժարվել «պատերազմ ահաբեկչության դեմ» արտահայտությունից՝ հիմնական թիրախ թողնելով «Ալ-Քաիդային» եւ հրաժարվելով բազմաթիվ հակառակորդների դեմ համաժամանակյա պայքարից: Եթե Բուշի վարչակարգի օրոք նույն «Թալիբանը», «Համասը» եւ «Հիզբալլահին» ընկալվում էին բացառապես որպես ահաբեկչական խմբավորումներ, ապա Օբամայի վարչակարգն անհրաժեշտ է համարում պայմաններ ստեղծել ռազմականացված կառույցներից դեպի քաղաքական կառույցներ վերջիններիս աստիճանական փոխակերպման համար՝ թերեւս հաշվի առնելով այն հանգամանքը, որ դժվար կլինի նրանց վերջնականորեն ասպարեզից դուրս մղելը:

Փաստորեն, ԱՄՆ ձեռնարկած քայլերը դեռեւս բավարար չեն, որպեսզի, ինչպես ասում են արեւմտյան վերլուծաբանները, «արաբական փողոցը» վստահի ԱՄՆ նոր վարչակարգին: Իսկ վստահությունը կարող է ձեռք բերվել ոչ միայն միջինարեւելյան խնդիրների կարգավորմամբ, այլ մի կարելու խնդրի իրացմամբ եւ՝ որպեսզի ԱՄՆ-ը դադարեցնի աջակցել արաբական ավտորիտար վարչակարգերին: Նշված խնդրի վերաբերյալ բավական հետաքրքիր դիտարկում է արել ԱՄՆ նախկին պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը 2005թ. Կահիրեի ամերիկյան համալսարանում ունեցած ելույթում: Նա նշել է, որ ԱՄՆ-ը Միջին Արեւելքում շուրջ 60 տարի է, ինչ ընտրություն է կատարում ժողովրդավարության եւ կայունության միջեւ՝ ամեն անգամ նախապատվությունը տալով կայունությանը: ԱՄՆ պետքարտուղարը խոստացավ,

որ իր երկիրը հետայսու կսատարի ժողովրդավարությամբ՝ շատ շուտով, սակայն, ի ցույց դնելով, որ անկեղծ չէ իր խոստումներում: Ասվածի ապացույցն է այն փաստը, որ 2006-ին Պաղեստինյան Ինքնավարությունում անցկացված ժողովրդավարական ընտրությունների արդյունքում իշխանության եկած իսլամական «Համասն» այդպես էլ չլեզբիտինացվեց ԱՄՆ-ի կողմից:

Այսպիսով, հակաամերիկյան տրամադրություններն արաբական աշխարհում շարունակում են գոյատևել՝ չնայած որոշակի նվազմանը: Այդ հարցում ծանրակշիռ դեր են կատարում նաև արաբական զանգվածային լրատվամիջոցները: Ներկայումս արաբական աշխարհում կան մրցունակ եւ տեխնիկապես գերզինված լրատվամիջոցներ, որոնցից են, օրինակ, «Ալ-Ջազիրան» կամ «Ալ-Արաբիյան»: Չնայած ԱՄՆ-ը քիչ ներդրումներ չի կատարել արաբական քարոզչական դաշտը վերահսկելու համար, սակայն դրանք, ընդհանուր առմամբ, քիչ արդյունավետ են եղել:

Հատկանշական է, որ 2009թ. դեկտեմբերին ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց բանաձեւ, որով կոչ էր անում Օբամայի վարչակարգին արաբական արբանյակային մի շարք հեռուստաալիքների նկատմամբ տնտեսական պատժամիջոցներ կիրառել՝ հաշվի առնելով այն փաստը, որ վերջիններս եթեր են տրամադրում ահաբեկիչների, վարկաբեկում են ԱՄՆ միջին-արեւելյան քաղաքականությունը՝ առաջ բերելով հակաամերիկյան տրամադրություններ: «Սեւ ցուցակի» մեջ հայտնվեցին «Համասի» Ալ-Անսարը, «Հիզբալլահի» Ալ-Մանարը, իրաքյան Աս-Սաուրան, նաև՝ Արաբսաթը (Ռիադ), Նայլսաթը (Եգիպտոս) եւ այլն: Այս փաստը դժգոհություն առաջացրեց Արաբական պետությունների լիգայի, ինչպես նաև արաբական իրավապաշտպան խմբերի շրջանում, որոնց համար խոսքի եւ մամուլի ազատության պաշտպանությամբ հանդես եկող ԱՄՆ նման կեցվածքը խիստ երկինաստ է թվում: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ արաբական հեռուստաալիքների մի մասին ֆինանսավորում են արաբական այն վարչակարգերը, որոնք առանձնանում են իրենց ամերիկամետ կողմնորոշմամբ:

Արաբական երկրներում շատերն այսօր թերանում են հավատալ, որ Օբաման կարող է էական փոփոխություններ իրականացնել: Նրանց կարծիքով՝ ԱՄՆ քաղաքականության մեջ որեւէ բան չի փոխվի, կփոխվի միայն դրա կերպը: Իսկ քանի դեռ կարգավորված չեն այն խնդիրները, որոնք արաբական աշխարհում ցավագին են ընկալվում, արաբական հասարակական կարծիքն Օբամայի միջինարեւելյան քաղաքականությունը համարելու է Ջ.Բուշի քաղաքականության շարունակությունը:

Ամեն պարագայում, արաբական իսլամական աշխարհում Բարաք Օբամայի նկատմամբ ծեւավորված որոշակի համակրանքն ի ցույց դրեց, որ իսլամական աշխարհի եւ Արեւմուտքի միջեւ առկա հակասությունները պայմանավորված են ոչ այնքան մշակութային, կրոնական կամ գաղափարական գործոններով, որքան ԱՄՆ վարած արտաքին քաղաքականությամբ: Այս տեսակետը հաստատում են նաեւ 2004թ. Zogby International-ի անցկացրած հարցախույզի տվյալները: Հարցվածների մեծ մասը նշել էր, որ ԱՄՆ-ը կարող է բարելավել իր իմիջը եւ վերակառուցել հարաբերություններն իսլամական աշխարհի հետ՝ պայմանով, եթե դադարեցնի աջակցել Իսրայելին եւ փոխի քաղաքականությունը Միջին Արեւելքի նկատմամբ:

## **ՊԱՏԵՐԱԶՄԻ ԷԹԻԿԱՆ ՅՐԵԱ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ Կարեն Վերանյան**

Մշտապես գտնվելով արտաքին սպառնալիքների ներքո՝ հրեությունն իր ինքնության ու անվտանգության պահպանման տեսանկյունից էական նշանակություն է հատկացրել պատերազմի բարոյախոսական (էթիկական) կողմին: Պատերազմի էթիկայի հիմնահարցն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հրեա հասարակությունում՝ կրելով այդ ժողովրդի պատմության տարբեր դարաշրջանների կնիքը:

### **Ավանդույթների ձեւավորման շրջան**

Ի սկզբանե հրեությունում պատերազմի վարման էթիկան գլխավորապես պայմանավորված է եղել հրեական կրոնական արժեհամակարգով: Աստվածաշնչում խոսվում է «պատերազմի վարման կանոնների» մասին, որոնց համաձայն՝ պատերազմները տարանջատվում են երկու հիմնական տեսակի:

#### «Սրբազան» կամ «պարտադիր պատերազմներ»

Պատերազմների այս տեսակը վերաբերում է քանանացիների դեմ պատերազմներին, որոնք հրեա ժողովուրդը պետք է վարեր Աստծո ուղղակի պատվիրանով ու աջակցությամբ: Կարելի է ասել, որ քանանացիների դեմ պայքարը պարունակում էր այսպես կոչված «սրբազան պատերազմին» հատուկ տարրեր, քանզի քանանացիները, ըստ Աստվածաշնչի, ոչ միայն չունեին հոգեւոր-բարոյական արժեքներ, այլև կարող էին խեղաթյուրել հրեա ժողովրդի հոգեւոր կերտվածքը եւ դարձնել նրան մեղսակից: Աստծո կողմից նախանշված «սրբազան պատերազմները», ելնելով դրանց անվերապահ իրագործման նշանակությունից, այլ կերպ անվանվում էին նաեւ «պարտադիր պատերազմներ»:

Հնագույն դարաշրջանում հրեությունում «սրբազան» կամ «պարտադիր պատերազմի» հասկացությունը համալրվեց եւս երեք բաղադրիչներով:

1. *Ինքնապաշտպանություն* Յրեական համայնքի, ընտանիքների անդամների եւ սեփական կյանքի պաշտպանությունը, որը նույնպես ամրագրված է Աստվածաշնչում, հանդիսանում է «պարտադիր պատերազմ»: Ինքնապաշտպանական պատերազմների մասին աստվածա-



շնչյան գրությունում ասվում է. «Եթե ինչ-որ մեկը եկել է քեզ սպանելու մտադրությամբ, սպանիր նրան առաջինը»:

2. *Կանխարգելիչ պատերազմ* Կանխարգելիչ կամ զսպման պատերազմները, որոնք համարվում են ինքնապաշտպանության դրսեւորումներից մեկը, իրականացվում են այն ժամանակ, երբ ակնառու է դառնում թշնամիների կողմից հրեա ժողովրդի անվտանգությանը ներկայացող սպառնալիքը: Կանխարգելիչ պատերազմը նախատեսում է նախահարձակ գործողություններ:

3. *Սպառնալիքի կանխարգելում՝ դաշնակցին աջակցելու միջոցով* - «Պարտադիր պատերազմի» վարման այս տեսակը գործի է դրվում այլ տարածքում թշնամու առաջխաղացման կանխման եւ սեփական ուժերի ուղղությամբ նախահաս սպառնալիքի ոչնչացման նպատակով:

«Ոչ պարտադիր» կամ «սովորական պատերազմներ»

Չնագույն ժամանակաշրջանում հրեա ժողովրդի վարած բոլոր պատերազմները, որոնք չեն համարվել «սրբազան առաքելություն», բնորոշվել են «սովորական կամ ոչ պարտադիր պատերազմներ»: Աստվածաշնչյան պատմություններում, որպես «ոչ պարտադիր պատերազմի» օրինակ, առանձնացվում է Դավիթ թագավորի ժամանակաշրջանը (Ք.ա. 10-րդ դար). վերջինս թշնամիներին զենքի ուժով հնազանդեցնելու որոշում ընդունեց, սակայն կարողացավ իրականացնել իր որոշումը միայն այն բանից հետո, երբ ստացավ «Իմաստունների խորհրդի» համաձայնությունը: Թալմուդում նման խորհրդի ստեղծումը կապվում է Մովսեսի անվան հետ, որը նշանակեց ընդհանուր առմամբ 71 իմաստուն դատավորների, որպեսզի վերջիններս աջակցեն իրեն՝ ժողովրդի ղեկավարման հարցերում:

Չարկ է նշել, որ «ոչ պարտադիր պատերազմների» մասնակցության հարցում առկա էին որոշակի սահմանափակումներ. դրանց կարող էին մասնակցություն ցուցաբերել միայն խիզախ եւ հավատացյալ մարդիկ, արգելվում էր մարտին մասնակցել դեռեւս չամուսնացած տղամարդկանց:

**Արժեքների փոփոխում**

Միջնադարյան ժամանակաշրջանում հրեական համայնքներն ապրում էին բավական բարդ ռազմաքաղաքական իրադրությունում: Մերձավոր Արեւելքում հաճախակի դարձած պատերազմները եւ մասնավորաբար Խաչակրաց արշավանքները զգալի բացասական հետք են թողել տեղի հրեական համայնքների ինքնապաշտպանության եւ ինքնակազմակերպման գործընթացի վրա: Չունենալով պետականություն եւ գտնվելով

տարբեր ժողովուրդների տիրապետության տակ՝ հրեական համայնքները չեն կարողացել կազմակերպված եւ հավաքական դիմադրություն ցույց տալ հակառակորդների հարձակումներին:

Արդյունքում՝ միջնադարում հրեությունում պատերազմի վարման էթիկայի նախկին գաղափարական հիմնադրույթները ոչ միայն լուրջ զարգացում չեն ունեցել, այլևս դրանցում սկսել են շոշափելի դառնալ խաղաղասիրական մոտեցումները: Միջնադարյան ռաբբիական հոգեւոր-բարոյական ուսմունքների զգալի հատվածում ուղղակիորեն արգելվում էր մասնակցել պատերազմներին բոլոր հոգեւորականներին եւ այն մարդկանց, ովքեր իրենց գործունեությունն ու կյանքը նվիրաբերել էին Աստծուն ծառայելուն:

### **Ավանդույթների վերիմաստավորում**

Չրեությունում պատերազմի վարման միջնադարյան ռաբբիական գաղափարական սկզբունքները որոշակիորեն վերիմաստավորվեցին 19-րդ դարի վերջերին, երբ պատմության թատերաբեմ եկավ սիոնիստական շարժումը: Սիոնիստ հոգեւորականության առաջնորդները պատերազմի վարման էթիկայի հիմնահարցում կրկին վերադարձան հրեական հնագույն ավանդույթներին, որտեղ առաջնակարգ նշանակություն էր տրվում հոգեւոր-բարոյական արժեքաբանությանը: Դա են հաստատում ժամանակաշրջանի հրեա քաղաքական գործիչների ու հոգեւորականների առաջարկած պատերազմի էթիկայի հարցադրումները: 19-րդ դարի կեսերի հայտնի ռաբբի Սամուել Դավիթ Լուցատուն իր կրոնական ուսմունքներում ասում է. «հրեա ժողովրդի կողմից պատերազմի սկսումը կարող է համարվել արդարացված, եթե դու ոտքի ես ելել թշնամու դեմ»: Չոգեւորականը «թշնամի» ասելով նկատի է ունենում աստվածաշնչյան այն «զավթողներին, ովքեր մտել են մեր տարածք՝ կողոպտելու նպատակով»:

Ի տարբերություն հնագույն ժամանակաշրջանում պատերազմի վարման էթիկայի ձեւավորված պատկերացումների, սիոնիստ քաղաքական առաջնորդներն այս հարցում ձգտում էին հուդայական հոգեւոր-բարոյական սկզբունքները համադրել պետական եւ աշխարհիկ գաղափարաբանական արժեքների հետ, ինչն առաջնակարգ նշանակություն պետք է ունենար հրեական պետականության հիմնադրման գործընթացում:

Պատերազմի վարման էթիկայի՝ սիոնիստական մոտեցումների հիմքում դրված էր 20-րդ դարասկզբին Պաղեստինում ձեւավորված հրեական ազգային-ազատագրական պայքարը՝ որպես ինքնապաշտպանություն եւ ազատագրում: Բավական խորհրդանշական են Վարշավայի ռաբբի Մենահեմ Զեմբայի (1883–1943թթ.) մոտեցումները պատերազմի վարման

էթիկայի վերաբերյալ: Նրա պնդմամբ, «Թորան արգելում է հրեաներին մասնակցել ազրեսիվ կամ զավթողական պատերազմներին. անհրաժեշտության դեպքում մենք պետք է դիմակայենք թշնամուն բոլոր ճակատներում, Հալախան (հուդայականության օրենքների ու իրավական նորմերի ամբողջություն, հուդայական ավանդական իրավունք) պահանջում է, որպեսզի պայքարենք ու դիմակայենք մինչև վերջ՝ անասելի վճռակա-նությամբ եւ խիզախությամբ՝ հանուն Աստծո անվան սրբացման»:

Պատերազմի էթիկայի հիմնահարցի վրա խոր ազդեցություն ունեցան նաեւ Եվրոպայում հրեաների հետապնդումների ու բռնությունների ալիքն ու Հոլոքոստը: Հրեության հատկապես պահպանողական շրջանակներում սկսվեցին զուգահեռներ անցկացվել հնագույն դարերից ի վեր հրեա ժողովրդի հերոսապատումների ու Հոլոքոստի միջև: Ի տարբերություն հնագույն դարերում հրեա ժողովրդի՝ հանուն Հայրենիքի ինքնազոհաբերման փառահեղ էջերի, Հոլոքոստը, ըստ սիոնիստ գաղափարախոսների, ասոցացվում էր պասիվ զոհողության ու հարմարվողականության հետ: Մյուս կողմից, Եվրոպայի հրեաների նկատմամբ բռնությունների ալիքը նոր լիցք հաղորդեց Պաղեստինում հաստատված հրեաների ազգային ազատագրական պայքարին: Տեղին է հիշատակել 1943թ. այդ առիթով Դավիթ Բեն-Գուրիոնի ելույթը. «Մենք ապրել ենք արտաքսման կյանքը, կախվածությունը, ստորացումը, ստրկությունն ու դեգրադացիան: Ոչ միայն ուրիշները մեզ բերեցին դրանց, այլև մենք ինքներս եկանք դրանց եւ ընդունեցինք մեր թուլությունը, մեր արտաքսումը... Մենք չգիտեինք ինչպես ապրել ու մեռնել՝ որպես ազատ մարդիկ: Մասադայի ու Թել-Հայի ինքնապաշտպանության նման, հրեաները պետք է ընտրեն այլ մահ՝ ոչ թե անուժ, անօգնական, անարժեք զոհաբերում, այլ զենքը ձեռքներին մահ»:

20-րդ դարասկզբին Պաղեստինում հաստատված հրեական բնակավայրերի ինքնապաշտպանության խորհրդանիշ դարձան Թորայում ամրագրված Աստծո խոսքերը. «Տիրե՛ք այդ հողերին եւ բնակեցրե՛ք դրանք, քանզի այդ հողերը ձեզ են տալիս ես, որպեսզի դուք տիրեք դրանց»: Կրոնական սիոնիզմի խոշորագույն գործիչներից մեկի՝ Ցվի Յեհուդա Կուկի (1891–1982թթ.), որը եւ Պաղեստինի վերաբնակեցման շարժման գաղափարախոսն է, ուսմունքի համաձայն, «...Իսրայելի տարածքի վրա հրեական ինքնիշխանության հաստատումն ամրագրված է Թորայով. երբեք կամավոր չպետք է հանձնել Իսրայելի աստվածաշնչյան սահմաններից անգամ ոչ մի հողակտոր»: Իսկ Ցվի Յեհուդա Կուկի հոր՝ Աբրահամ-Իսահակ հա-Քոհեն Կուկի կրոնափիլիսոփայական աշխատություններից մեկում՝ «Օրոթ» գրքում (եբր. թարգմ.՝ «Կրակներ») խոսվում է Իսրայելի

հետ հրեա ժողովրդի հատուկ ներքին կապի գոյության եւ այն մասին, որ Աստծո կամոք հրեա ժողովրդի հոգեւոր զարգացումն ու արարումը հնարավոր է միայն Էրեց-Իսրայելի տարածքում:

20-րդ դարասկզբից հրեությունում պատերազմի վարման էթիկայի՝ պահպանողական մոտեցումների առաջնությունը հետագա արտացոլում գտավ նաեւ 1948թ. Իսրայել պետության հիմնադրումից անմիջապես հետո ձեւավորված Իսրայելի պաշտպանության ուժերի մարտական ավանդույթներում: Իսրայելի պաշտպանության բանակի դոկտրինում ամրագրված են հուդայականության հոգեւոր-բարոյական հիմնարար արժեքներն ու հրեական ազգային ինքնության անքակտելի սկզբունքները: Առանձնացնենք դոկտրինի հոգեւոր-բարոյական որոշ հիմնադրույթներ, որոնք ուղղակիորեն կապ ունեն պատերազմի վարման էթիկական հիմնահարցի հետ: Առանձնահատուկ կարեւորություն է ներկայացնում այսպես կոչված «համաչափ փոխհատուցման» սկզբունքը, ըստ որի՝ հակառակորդի կամ հակառակորդների կողմից Իսրայել պետության, նրա բնակչության եւ համայն հրեության անվտանգությանը նետված յուրաքանչյուր սպառնալիք կամ գործողություն պետք է ստանա Իսրայելի պաշտպանության բանակի՝ սպառնալիքին հավասար կամ համաչափ պատասխան («ակն ընդ ական» սկզբունքը): Յետագայում, կապված Իսրայելի եւ հրեական անվտանգությանը նետված նոր մարտահրավերների հետ, կարեւորություն ստացավ այսպես կոչված «ասիմետրիկ փոխհատուցման» սկզբունքը, որի համաձայն՝ հրեականը հասցեագրված սպառնալիքների հակազդման հարցում գործում է ոչ թե ուղիղ, այլ անհամաչափ պատասխանի սկզբունքը:

Պատերազմի էթիկայի հիմնադրույթների շարքում առանձնացվում է նաեւ Իսրայելի «պարտության անթույլատրելիության» սկզբունքը, որն ամրագրված է երկրի պաշտպանության ուժերի դոկտրինի «Հիմնական հայեցակարգ» մասնաբաժնի առաջին կետով՝ «Իսրայելը չի կարող պարտություն կրել անգամ մեկ պատերազմում»:

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Վահրամ Հովյան	
ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅԵՐ .....	1
Ռուբեն Մելքոնյան	
ՊՈԼՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....	6
Հայկ Գաբրիելյան	
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱ ՓՈՒԼԸ .....	10
Բենիամին Պողոսյան	
ԹՈՒՐՔ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	16
Արտաշես Տեր-Հարությունյան	
ՌՈՒՄԱՍՏԱՆԸ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱ՞Ջ .....	22
Սեւակ Սարուխանյան	
ԻՐԱՆԻ ՏԱՐԱԾ ԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ .....	27
Գագիկ Տերտերյան	
ԱՖՂԱՆՍՏԱՆ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ .....	32
Ֆեոդոր Լուկյանով	
ԱՄՆ–ՉԻՆԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	38
Արաքս Փաշայան	
ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԱՐԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ .....	42
Կարեն Վերանյան	
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԷԹԻԿԱՆ ՀՐԵԱ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ .....	48

*Շապիկին պատկերված է  
Արագածը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 4,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՄ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: